


2260

202.3
V-25



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Ս. ՀԱՏՈՐ

Հարգելի խնամքով "խաղաղ"
Հարգաբարձր

202-3
5-25


„ԴՐԱԽՏԻ ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ“

ԵԻՍԵՖՈՍԵԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆԻՑ



Աշխատանքից

ԳՐԻԳ. առ. ԲԱՅ. ՄԱՆԳԱՆՈՒՆԵՐ



Թ Ի Յ Ի Ղ

Տպարան «Էդիս», Գանդակապետ № 3.

1908

24 JUN 2013

2023 40812-63 -260
 11-25 մանկագրական
 Դրամագր Եւրոպայի
 թերթերը 24 հունիս

11-3986 11/0500
 11-3986 13/0500
 11-3986 14/0500
 11-10837 26/0500
 11-10837 30/0506



40812-63

03 AUG 2009

Յալմանի ըստեղծ

Մեծագույնի և Միջալի

Յուզեփան Արամիանցին

Սրտագին նուէր

Աշխատասիրողից

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գիտնականներն ասում են թէ, «սով է գալու» մենք այս կասկածաւոր խօսքին հաւատալով՝ սկսում ենք ցորեն ամբարելու պատրաստութիւններ տեսնել: Ասում են, «խօլերայ ցաւ է գալու», դարձեալ հաւատում ենք և սկսում մեր տները մաքրել և հարկաւոր զեղերի պատրաստութիւն տեսնել: Ասում են, «շարժ է լինելու և կամ մեծ հեղեղներ է լինելու» այլև այսպիսի շատ կասկածաւոր բաներ, մենք այս ամենի վերայ կասկածում ենք, թէ մի դուցէ նոցա ասածներն ուղիղ լինին. ուստի հաւատալով մեծ-մեծ պատրաստութիւններ ենք տեսնում և մեղ զգոյշ պահում:

Գիտնականներն և աւելի բարձր գիտնականներն մեղ ասում են, «թէ մեր մաշից յետոյ՝ մեր հոգին պէտք է գնայ յաւիտենականութիւն. եթէ աշխարհիս մէջ բարի կեանք է անցրել՝ ժառանգելու է յաւիտենական երջանկութիւնը, իսկ եթէ չար կեանք է անցրել՝ յաւիտենական պատիժը:

Արդ՝ եթէ վերը յիշած կասկածաւոր խօսքերին հաւատալով՝ գործ ենք դնում զգուշութիւն և տեսնում հարկ եղած և կամ հրամայուած պատրաստութիւններն, ինչո՞ւ չպէտք է ուշադրութիւն դարձնենք այս մեծ և մեծերից ամենամեծ սարսափի վերայ, որ ըստ այնմ գործ գնենք հարկաւոր պատրաստութիւնը, որովհետեւ այսպիսի մի մեծ բանի վերայ թեթև աչքով նայել չի լինիլ, նորա հետ խաղաղ չի լինիլ:

Շատ լմաւ, եթէ հաւատանք և բարեգործութեամբ պատրաստուած գնանք յաւիտենականութիւն, այնտեղ տեսնենք՝ որ յիշաւի մեր հոգին անմահ է եղել, և այժմ ժառանգելու

է յաւիտենական երջանկութիւնը, հարկաւ՝ այն ժամանակ մենք կլցուինք յաւիտենական երջանկութեան անբեւեակայելի ուրախութիւններով, իսկ հակառակն՝ եթէ այստեղ մեր վերջին շունչը փչելով՝ մեր գոյութիւնն էլ՝ մեր վերջի շնչի հետ ոչնչանայ՝ այն ժամանակ միզ լինչ մլտա, որ մենք աշխարհումս բարի կեանք ենք անցրել:

Եթէ չհաւատանք հոգւոյ անմահութեանը, այս յոյսը սուտ և շինծու ընդունենք և այնպէս համարենք՝ որ այսպիսի կեղծ միջոցներով կամեցել են մեզ խարել և իշխանութիւնների առաջ խոնարհեցնել, այս յոյսը՝ որ մեր բոլոր ցաւերի բժշկութեան սպեղանին է, և մեր կեանքի բոլոր վշտերի մխիթարութիւնը, չհաւատալով այս յոյսը մեզանից վերցնենք, այն ժամանակ մենք կդառնանք կատարեալ գազաններ, և մեղքերը անխտիր կգործենք, վերջը հարկաւ պէտք է մեռնենք, բայց անհաւատութեանը հակառակ՝ այստեղ մեք աչքերը փակելով՝ յանկարծ բանանք յաւիտենականութեան մէջ, տեսնենք՝ որ յիրաւի կայ յաւիտենականութիւն, այստեղ՝ այն ահաւոր բոպէին լինչ պէտք է անենք, եթէ ուզենանք՝ չենք կարող յետ դառնալ երկիր, իսկ լալ ու զղջալն անօգուտ է, յաւիտենականութեան մէջ փոփոխութիւն չի լինիլ, կամայ ակամայ մատնուելու ենք սարսափների սարսափներին յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից. ուրեմն լինչ օգուտ մեզ՝ մեր չհաւատալը, և մեր հոգին անցաւոր և բոպէական կեանքի զանազան հաճոյքներով և հեշտութեամբ ապականելը:

Այս բոլորը լաւ կշռելուց և լաւ մտածելուց յետոյ՝ ինձ պարտք համարեցի ներկայ դառն ժամանակուս յաւիտենականութեան վերայ բոլորովին ուշադրութիւն չդարձնողների համար՝ մեծ Յ. Եւսեբիոսի հինգ հատոր ժամանակի կշիռ գեղուն մարգարիտի հատիկներով առաջին հատորը գրաքառից տեղ տեղ յապաւելով և տեղ տեղ աւելացնելով աշխատեցի աշխարհաբառի վերածել, և տալ յաւիտենական ճշմարտութեան վերայ ուշադրութիւն չդարձնողներին, որոնք եթէ ունին քաջութիւն՝ թող այս գիրքը ծայրէ ի ծայր կարդառ

և հաստատ հաւատան՝ որ սորա միջի լի ու լի մարգարիտների գնովը կատանան արժանիք գնել և ժառանգել յաւիտենական երջանկութիւնը, որովհետև մարգարիտների գեղեցեկութեան սիրովը յափշտակած՝ կշտապեն իւրեանց գնալու ընթացքը՝ օր առաջ պատրաստականութեամբ ուղղել դէպի յաւիտենական ճշմարտութեան ճանապարհը:

Արդ՝ մեծ Եւսեբիոսի հեղինակութիւնիցը դուրս բերելով «Դրախտի Մարգարիտները» աշխատեցի նորանցից կադմել սոյն մարգարտեայ փայլուն փունջը և անկեղծ սրտով նուիրել Ձեզ ո՛ մեծ բարեգործ պ. Միքայէլ Յովսէփեան Սրամեանց, այն բարեգործութեանց համար՝ որ գործել էք ազգիս և անխտիր մարդկութեանը օգտին. ես չեմ կարող թուել Ձեր և այն բոլոր բարեգործութիւններն՝ որոնք ինձ անյայտ են, այլ առ այժմ բաւական եմ հաւարում ճշմարիտ աղբիւրներից հաւաքածներս թուել, ո՞չ միայն ի պարծանս՝ այլ ի գրգիռ և ի խրախուսանս Ձեր՝ որ նոյնը շարունակէք, և Ձեզապիսեացը՝ որ ազգի կարօտեալների պէտքերը լցնելու հոգսը շտապեն շարունակ և անվհատ հոգալ:

ա) Դուք Միւնեաց աշխարհի Բեաթուկ գիւղի եկեղեցին Ձեր իսկ ծախքովը կառուցիք և չմոռացաք նորա բոլոր զարդ ու զարդեղէնները Ձեր ծախքովը հոգալ:

բ) Բազուայ «Մարդասիրական Լ՛նկերութեան» հիմքը դնելու ժամանակ՝ Դուք Գրիգոր Թումայեանցի հետ՝ գրամագլխի նուէրներ հաւաքեցիք, իսկ միմիայն Ձեզանից գաւազան ժամանակներում նուիրեցիք մօտաւորապէս 10,000 ուրլի:

գ) Հանգուցեալ մեհ. Մկրտիչ Ա. Կաթողիկոսի գալու ժամանակ նուիրահաւաք մասնաժողովին գանձապահ ընտրուեցաք, և 7000 ուրլի Դուք Ձեզանից նուիրեցիք, իսկ հանգանակած 28,000 ուրլի գումարի մի մասը 1904 թուին ուղարկեցիք Պօլիս Պատրիարքին, մի մասը յանձնեցիք Ս. Էջմիածնին, իսկ մնացորդը տուիք պ. Բաղդամ Մասէիչ Դօւլախանեանցին՝ գործ դնելու Մայր Աթոռի օգտին:

դ) Տասնևութն ամաց հետէ քսանից աւելի սաներ էք պահում արտասահմանի ուսման բարձրագոյն տաճարներումը, ազգի յառաջադիմութեան օգտի համար:

ե) 1903 թուի սովից տանջուած թուրքերին բաժանեցիք 1000 ուրբուլ ցորին:

զ) Նոյն թուին կալուածները գրաւման ժամանակ՝ ի միջի մի քանի յայտնի բարեգործների Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրանոցին ընծայեցիք 2500 ուրբուլ:

է) 1907 թուին Բեաթուկ գիւղի սովատանջ հայերին հասցրիք 1000 ուրբուլ հաց, որով նորանց ի նորոյ կենդանութիւն սուրբ:

ը) Նոյն թուին Բագուայ մասնաժողովին յօգուտ սովիւց նուիրեցիք 4000 ուրբուլ:

թ) Նոյն թուին Փօթուայ Հայոց եկեղեցւոյ շինութեանը ընծայեցիք 37,500 ուրբուլ արժողութեամբ Սղոցարանի գործարանից երկաթեղէններն ու փայտեղէնները:

ժ) Նոյն թուին Թիֆլիսի Հաւաքարի քաղաքամասումը, կառուցիք մի հոյակապ և շքեղ հիւանդանոց 100,000 ուրբուլ ծախսելով Ձեզանից:

ժա) Նոյն թուին Հաղբատու հոշակաւոր վանքին ընծայեցիք 500 դեսկատին անտառ և վարելահող:

ժբ) Նոյն թուին այլևս պատմական Կայան բերդը ամբողջովին ընծայեցիք յիշեալ վանքին:

ժգ) «Նուրէ Աբաղուէնի» լրագրի գոյութիւնը պահպանելու համար նուիրեցիք 35,000 ուրբուլ:

ժդ) Կոյրերի ուսումնարանին նուիրեցիք 1500 ուրբուլ:

ժե) Քաղաքիս բ. գիմնազիային նուիրեցիք 50,000 ո., որտեղ առանց խտրութեան ազգի, սովորում են բազմաթիւ ուսանողներ, և որտեղ Ձեր իսկ շնորհիւ ընդունել են բազմաթիւ հայ ուսանողներ:

ժզ) Լեռներով դէպի Շուշի նոր և ապահով ճանապարհ շինելուն նուիրեցիք 2000 ուրբուլ:

Եւ ահա այսպէս, կան մարդիկ՝ որոնց բարեգործական կառակներն իւրեանց մահից յետոյ են դանդաղ կատարում,

իսկ Դուք, որպէս այր կատարեալ՝ Ձեր կենդանութեան օրերումը Ձեր իսկ ձեռքովը այսպէս կատարել էք և կատարում էք՝ և այն էլ շարունակ, և այս բոլոր պատճառներովը սըրտազին նուիրում եմ Ձեզ՝ այս մարդարտեայ փայլուն փունջը «Դրախտի Մարգարիտները», որ միշտ ընթեռնուք և քաջ տեղեկանք բարեգործութեան ճանապարհը հաւատքով դնացողների յաւիտենական երջանկութիւնը, և անհաւատութեամբ դնացողների յաւիտենական ապերջանկութիւնը, որով ողևորիք վերը յիշած բազմաթիւ. բարեգործութեանց հետ՝ նման գեղեցիկ ծրագրերով օգտուէա շէնքերի թիւը շարունակ աւելացնել, որոնցով ոչ միայն այս կեանքումը բիւրաւոր բերանների օրհնաբանութեամբ կանմահանաք և կարժանանաք կոչուելու «Մեծ մարդ» և կամ «Ազգի բարերար» այլև յաւիտենականութեանը մէջ կաժանանաք ժառանգել երջանկութեան աներեակայելի փառքերը:

Գրիգոր առաջ քանանայ Մանգակունի

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ժամանակաւորի եւ յաւիտենականի զանազանութիւնը

Մի բան՝ լաւ յառաջ տանելու համար՝ ամենից առաջ պէտք է իմանալ նորա վարկը, և վարկից առաջ՝ նորա վերաբերութեամբ ունենալ լաւ ճանաչումն, որն այս երկրաւոր աշխարհի մէջ շատ թերի և նսեմ է. ուստի պէտք է դիմենք երկային և յաւիտենական գաւառը, որի համար ստեղծուել ենք: Զարմանք չէ, որ յաւիտենականներն մարդկային մըտքից շատ հեռու լինելու համար՝ քիչ են ճանաչում մեղանից, որովհետեւ տեսնում ենք և մեր ձեռքերովը շօշափում ժամանակաւորները՝ որոնց վերայ մութը ճանաչումն ունինք. ուրեմն ինչպէս կարող ենք իմանալ հանդերձեալ աշխարհի բաները, որոնց չենք ճանաչում, այլև չենք ճանաչում նորանց՝ որոնց մէջ և բնակւում ենք:

Մեծութիւնները, հեշտութիւնները, պատիւները, փառքերը և աշխարհիս բոլոր բարիքը՝ մարդիկ այն պատճառաւ ջերմ փափաղով ցանկանում են ձեռք բերել, որովհետեւ չեն ճանաչում:

Պետրոս առաքեալը կղէմիոս Հոովմէացուն իրաւամբ ասաց. «Թէ աշխարհս՝ ինչպէս մի տուն ծխով լի է»: Ինչպէս որ ծխով լի տան մէջ բնակողը չէ կարող ազատ տեսնել թէ տան միջի և թէ դրսի եղածները՝ ծխի արգելք լինելու առթիւ, այսպէս էլ աշխարհիս մէջ բնակուողները չեն կարող

տեսնել թէ աշխարհի միջի և թէ դրսի եղածները, և չեն համարում մի մեծ բան՝ ոչ յաւիտենականի անշարժութիւնը և ոչ ժամանակաւորի անարգութիւնը, միապէս անզէտ են մնում, թէ երկնայինների և թէ երկրայինների վերաբերութեամբ: Եւ ճանշման պակասութեան պատճառաւ, փոփոխում են իւրեանց համարման կշիռը, կշռելով յաւիտենականը ժամանակաւորաց կշռով՝ անելով երկնայնոց վերայ այն հաշիւը, որ հարկաւոր էր անել անցաւոր և կորստական բաների վերայ: Սա շատ մեծ մոլորութիւն է, որ երանելի Գրիգորիոսն ողբալով ասաց: Այս կեանքի արքայը՝ համարում է մեզ բնիկ հայրենիք, մեր խաւար ու կեղծ իմաստութիւնը՝ ինչպէս անշիջանելի լոյս, և մեր պանդուխտութեն ճանապարհորդութիւնը՝ բնակելու հաստատ տեղ: Եւ այս պատճառաւ չարերն՝ ինչպէս քարիներ, և քարիներն՝ ինչպէս չարեր ձեւացած կեղծում են, ուստի մարդկանց մօտի և դատաստանի այսպիսի շփոթութեան համար՝ Դաւիթը Տիրոջն աղաչում էր, տալ իրան մի ուսուցիչ, որ ճշմարիտ բարին՝ իրան սովորեցնէ, ասելով. «Տիրոջը բարին՝ մեզ ով ցոյց կտայ»: այն պատճառաւ է այսպէս ասում, որ չգտաւ մէկին՝ որ աշխարհը ճանաչէ. և նորա միջի բարիքը, և նորան՝ որ մեր ձեռքն է, իսրայէլացւոց նման, որոնք մանանան թէ և իւրեանց աչքի առաջն ունէինք բայց նորան չէին ճանաչում, ուստի ասում էին. «Այս ի՞նչ է, այս ի՞նչ է»: Բայց ի՞նչ, այլ և այս սոսկ հետաքրքրութիւնն էլ պակաս է մեզանից. կայ արդեօք մէկն՝ որ հետաքրքրելով հարցնէ ի՞նչ բան են մեծութիւններն՝ որոնց համար մարդիկ իւրեանց անձերը դնում են մահուան վտանգների, ի՞նչ բան են բարձր աստիճաններն, որոնց համար մարդկանց սրտերը հպարտութիւնից և նախանձից բարախելով պատուում են, ի՞նչ բաներ են հեշտութիւններն, որոնց համար կորչում է մեր առողջութիւնը և կարճանում մեր կեանքը. ի՞նչ բաներ են աշխարհի բարիքները, որ միայն այստեղ են վայելում. իսկ այն աշխարհը մտնելուն պէս՝ չքանալու են. ինչպէս որ

մանանան չբացաւ՝ երբոր իսրայէլացիք պանդխտութեան ճանապարհորդութիւնից մտան Աւետեաց երկիրը:

Յիրաւի, որ մանանան՝ յայտնութեան գրքի մէջ անուանուեց «Մանանայ թագուցեալ» որովհետեւ իսրայէլացիք նորան իւրեանց ձեռքերումն ունէին՝ լայց նորան չէին ճանաչում. այսպէս էլ հեշտասէրներից ծածկուած են այս կեանքի բաները, որ թէ և իւրեանց ձեռքերով նորան շօշափում են՝ բայց չեն ճանաչում և նոցա գինը չփոթում են. որովհետեւ ժամանակաւորների համար անում են այն բանը՝ որ պարտական էին անել յաւիտենականների համար, և արհամարհում են յաւիտենականները՝ ժամանակաւորները մեծ համարելու համար, որոնց արժան էր անարգել:

Զարթնին մահկանացուները, բանն իւրեանց աչքերը և տեսնեն ժամանակաւորի և յաւիտենականի միջի զանազանութիւնը, որ կարողանան տալ ամեն մի բանի՝ իւրեանց արդար վճիռը, այն է, արհամարհել այն ամենը, որ ժամանակի հետ վերջանում է, և մեծ համարել այն՝ որ կայ և կմնայ յաւիտեան: Այս կեանքի մէջ պէտք է խնդրել մըշտնջնաւորութիւնը, որ ժամանակաւորները լինին մեղադրութ ստանալու յաւիտենականները, որովհետեւ առանց սոցա ճանաչման՝ նոր չկայ ստանալու նորանց:

Մանանան՝ որ տուաւ իսրայէլի որդւոցը, երբոր անապատումը ճանապարհորդում էին, մինչև նոցա Աւետեաց երկիր հասնելը, իւր շատ խորհրդաւոր նշանակութիւնների հետ, ունէր և այս, որ օրինակ էր բարութեանցն՝ այս կեանքի, որի մէջ պանդխտում ենք՝ մինչև որ հասնինք աւետեաց յաւիտենական երանութեան երկիրը: Այս պատճառաւ շուտով հոտում էր և ապականում, ինչպէս որ ամեն բաներին պատահում է: Միայն չէր հոտում և հալւում, երբ ժողովում և պահում էին շարաթ օրուայ համար, որ օրինակ էր յաւիտենական փառքի: Որովհետեւ նպատակն, որի համար ժողովում էին, կարող էր նորան անել ապականացուից՝ անապական և մշտնջնաւոր: Ինչպէս Աստուածաբանի մէկը գրում է. «Մեծ է և շատ մեծ՝ աչքը ձգել և նայել

երկնքի և անանցանելի բարեաց վերայ, որ ժամանակաւոր և կորստական բաների գործածութիւնը, կարողանայ մեղ տալ ստանալու յաւիտենականները, և փոխել փոքրը՝ մեծի հետ, փոփոխականը՝ անփոփոխի և հաստատի հետ, մահկանացուն՝ անմահի և անվախճանի հետ: Փիլիսոփաներից ոմանք շատ լաւ ճանաչեցին այս կեանքի բաները, առանց յաւիտենականին նայելու, նորանց մէջ գտան շատ պակասութիւններ, և իմաստունի մէկը՝ համարօտ բովանդակեց այս երեք բանի մէջ, այն է փոքրերը են, փոփոխականներ են և ապականացուններ են, և այս բոլոր հանգամանքները՝ տեսնուած են մանանայի վերայ:

Մանանան փոքր և մանր էր, գնձի սերմի չափ, նորա փոփոխականութիւնը և անկայութիւնը շատ յայտնի էր, որովհետեւ ոմանց քմաց մէջ քաղցր և պարարտ էր, և ոմանց դառը և վտիտ, և այնքան կարճատեւ էր՝ մինչև մի օր անցնելուց յետոյ, նորա մէջ որդ էր եռում, և բացի սորանից, նորան վայելելու համար մեծ աշխատութիւն էր հարկաւոր՝ որովհետեւ ուտելուց առաջ պէտք է նորան անկանի մէջ մանրել և փօշիացնել, յետոյ պուտան մէջ եփել և ուտել, այս կեանքի բարութեանց նման, որ առանց վշտերի և չարչարանքների չին լինում վայելել՝ հանդերձ իւրեանց բոլոր պակասութիւններովը: Եւ բացի սորանցից, մանանայի իսկութիւնը բոլորն էլ չէին վայելում, որովհետեւ չէին գտնում նորա մէջ այն համը՝ որին միշտ ցանկանում էին, որովհետեւ մեղաւորների քիմքը զրկուած էին նորա քաղցրութիւնից: Այսպէս բոլորովին և մենք՝ մեր մոլութեամբ վերցնում հեռացնում ենք բաների բնական համը, որոնց մասին ասելու ենք իւրեանց տեղումը:

Ճշմարիտ է, որ մանանան մաքուր ու թափանցիկ սառցի նման պայծառ և փայլուն տեսք ունէր, այսպէս և աշխարհիս բարիքը, որովհետեւ պայծառ ու գեղեցկատես են, բայց ապակուց աւելի դիւրաբեկ, պակասաւոր, անհաստատ, աղակաւոր, կորստական և մահկանացու են, որ միայն ազօտ ու սուս լուսովը՝ խաբում են մեր աչքը, և փափա-

գելի են լինում մեզնից՝ ինչպէս մեծամեծ և մշտնջենաւոր բարիքներ:

Մէկ կողմ թողնենք կեղծ տեսքը և արտաքին հրեղիթը, և նկատենք իրերի էութիւնը և ճշմարտութիւնը, այն ժամանակ կգտնենք, որ ժամանակաւոր բոլոր բարիքը՝ շատ նուազ ու փոքր են, իսկ յաւիտենականը՝ մեծ և հաստատուն, ժամանակաւորը՝ կարճ և անցաւոր, իսկ յաւիտենականը՝ յարմարաց, անանցանելի և մշտնջենաւոր:

Ինչպէս Գրիգոր Աստուածաբանն է ասում. «Անչափ է՝ որին չկայ վերջ ու սահման, և փոքր է՝ որին շուտով է համեմատ վախճան»: Այս պատճառաւ, սկսենք բանալ այս վարագոյրը և յայտնի ցոյց տալ այն մեծ հեռաւորութիւնը, որ երկնի և երկրի բարեաց մէջն է, և որոնց մէկը յաւիտենական է և միւսը ժամանակաւոր, և խօսենք ժամանակաւորների անարգութեանց և յաւիտենականների ազնւութեանց համար, ինչպէս փիլիսոփաներից մէկն է ասում. «Լոյսից աւելի յայտնին չկայ, և նորանից աւելի խրթին չկայ»: Եւ այս կարելի է ասել ուրիշ իրերի համար էլ, որոնք թէև համարուած են լինում լուսաւայծաւ, բայց չեն կարող հասկանալի լինել, որոնց մէջ ժամակաւորը և յաւիտենականը ոչ նուազ մութն են, և այս ասիւթը՝ պէտք է աշխատենք նորանց աւելի պարզաբանել և յայտնի անել՝ հաւատքի լուսոյ օգնութեամբ, որոնց վարդապետութեամբ, և փիլիսոփաների սկզբունքների միջոցաւ:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Թէ որքան հարկաւոր է յաւիտենականութեան մտածողութիւնը՝ վարքը դէպի լաւ փոխելու համար

Սուրբ Օգոստինոսը յաւիտենականութեան մտածողութիւնը կոչում է «մեծ խոկումն» որովհետեւ յաւիտենականութեան յիշատակը՝ սրբերին կտայ մեծ ուրախութիւն, մեղաւորներին՝ մեծ դարձուբանք, և երկուսին էլ մեծ օգուտ:

Գործել կտայ մեծամեծ բաներ՝ որովհետև արհամարհել կտայ աշխարհի ջնշին բաները: Եւ այս լուսովը՝ կամենում եմ սկիզբն անել բանալու՝ ժամանակագրությունի նուազ, խաբէրայ և անարգ դաշար, և ուսեղ կերպէւ ապաւորել յաւիտենական բարեաց մտածողութիւնը. Դաւթի նման՝ մեր ուշադրութիւնը պէտք է դարձնենք մտածողութեան վերայ, որովհետև երբոր նա մեղքի մէջն էր՝ մտածողութիւնը նորան ձգեց սարսափների մէջ, իսկ երբոր սրբացաւ, նորան միշտ զօրացրեց զարգանալ սրբութեանց մէջ, և աշխատեալ նա հանեց յաւիտենականութեան մտածողութիւնից իւր անձին անպատմելի գուտներ:

Այս պատճառաւ, շատ անգամ թշ միայն կրկնում է նորա յիշատակը իւր սաղմոսների մէջ, որտեղ միշտ լսվում են այս բաները. «Ամեն ժամ, յաւիտեան, յաւիտեանս յաւիտենից». այլևս վերնագրերի և արձանագրերի մէջ: Որովհետև չկայ նորան աւելի յարմար վերնագիր, քան այս «Ի կատարած»:

Արդ, մարգարէն գիշեր և ցերեկ մտածում էր այս յաւիտենականութիւնը, սա նորան ստիպում էր ազազակել գէպի երկինքը, սա տալիս էր նորան կարգաւ գէպի Առտուած, սա նորան համր էր դարձնում, և մարդկանց մէջ լուռ ու մուռջ, սա զրեթէ սառեցնում էր նորա արիւնը և բազկի զարկը՝ դադարեցնում, սա՝ այս կեանքի հեշտալի քաղցրութեանց մէջ՝ դնում էր դառն օշինտը. սա, ստիպում էր իւր անձին, որ իւր խղճի վերայ անէ նրբադնին և սաստիկ դատաստան, սա նորա վերայ բերեց վարքի զարմանալի փոփոխութիւն և Աստուծոյն ծառայելու սքանչելի հռանդ: Եւ այս բոլոր ներգործութիւններն՝ որոնք ծնան յաւիտենականութեան յիշատակութիւնից՝ երևում են 76. Սաղմոսի մէջ, որ ի միջի այլոց ասում է. «Իմ աչքերը աւելի վաղ արթուն պահեցի, խռովեցայ և չկարացի խօսել» և պատճառը շուտով յառաջ է բերում ասելով. «Մտածեցի առաջի օրերն, և յաւիտենականութեան տարիները յիշեցի»: Այս մտածմունքը նորա արթնութեանց և զգուշութեանց

պատճառ եղան, որովհետև արեւը ծագելուց առաջ այն էր մտածում, և մայր մտնելուց յետոյ ժամ առ ժամ նոյնն էր կրկնում, յաւիտենականութիւնից այնքան էր դարհուրում՝ մինչև անգամ ինքն էր ասում. «Հոգիս՝ իմ մէջ տանջուած է» նա իւր մտածմանց մէջ՝ դարհուրում էր այս՝ կասկածից. թէ արդեօք, մասնակի է յաւիտենական դատապարտութեանը թէ վայելելու է յաւիտենական. երջանկութիւնը: Եւ զարմանք չէ, որ յաւիտենականութեան մտածողութեամբ մի այսպիսի ս. թագաւոր դարհուրելով սարսափում է, մինչ գիւ անհաւատ և վայրենաբարոյ փրկսովաները՝ թէ և իմաստութեան նուազ լոյսն ունէին՝ սակայն յաւիտենականութիւնից զարհուրում էին, և այս պատճառաւ յաւիտենականութիւնը երեւակայելու համար, նկարում էին նորան արքայիկ օձի կերպով, որ բոլոր օձերից աւելի դժնեայ և սարսափելին է, որ տեսութեամբն թշ միայն զարհուրեցնում է՝ այլևս սպանում, և այսպէս չկայ մի բան՝ որ աւելի սարսափեցնէ մեզ, քան յաւիտենականութեան տանջանքը: Ոմանք յաւիտենականութիւնը ձեացնում էին, ինչպէս մի զարհուրելի և ահարկու խոր վիհ, որի մուտքն ունէր չորս աստիճան, առաջինը երկաթի, երկրորդը պղնձի, երրորդն արծաթի և չորրորդն ոսկի. նորանց վերայ մանուկները ցատքոտելով և ուրախանալով խաղում էին, ուշադրութիւն չդարձնելով այն մեծ վտանգի վերայ՝ թէ չլինի մի սխալ շարժումից ընկնէին այն խարխուրատ վիհ մէջ, այսպիսի ահարկու նմանութեամբ նկարագրեցին յաւիտենականութիւնը թշ միայն ցոյց տալու նորա ահարկութիւնը՝ այլ մարդկանց անուշադրութիւնը, որ այս կեանքի մէջ խորհում են և գործում միմիայն հարստութիւն ձեռք բերելու, երջանիկ կեանք անցնելու, ուտելու և զուարճանալու համար՝ ամենեւին ուշադրութիւն չեն դարձնում և չեն կասկածում, թէ մի գուցէ՝ մեր անհոգութեամբ ընկնենք յաւիտենականութեան անհունութեան մէջ:

Դաւթ մարգարէն Տիրոջ անունով խոստանում է նորանց՝ որոնք ննջում են երկու փնձակի մէջ, այսինքն սրբ-

40812-67



տալիս աղօթքներով մտածում են յաւիտենական արքայութիւնը և յաւիտենական տանջանքը, նորանց կտան աղանոյ արծաթապատ թևեր, (որ թռչունների թևերի մէջ աւելի թեթեւ է) և թիկնամէջը ոսկու գոյնով, որովհետև հոգևոր կեանքը չէ՞ թէ միայն կ'այանում է նորա մէջ՝ որ գործէ բարի, այլ կրէ չարիք ուրիշներից. առհասարակ, չարիք կրելը դժուարին է՝ քան բարիք գործելը, և այսպէս աւելի արդիւնաւոր է կրելը՝ քան գործելը, թէև երկուսն էլ գերազանց առաքինութիւններ են, այս պատճառաւ մարգարէն ասաց. «Նորա թիկնամէջը ոսկու գունով և թևերն արծաթապատ»: Յակովբ նահապետը այնքան մեծ էր համարում վերը իշած երկու առաքինութիւնները, որ ինչպէս օրհնութիւն՝ տուաւ իւր Իսաքար որդուն, ասելով «Իսաքարը՝ հանգստութիւնը երկու վիճակների մէջ է որոնում», որով կամենում է ասել «Թէ նա ուշադրութեամբ մտածելու է երկու վերջին վախճանը, այն է յաւիտենական երանութիւնը և յաւիտենական թշուառութիւնը»:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Յաւիտենականութեան յիշատակը՝ մահ- նուանից աւելի զօրեղ է

Թէև երկուսի յիշատակն էլ աւելի զօրեղ և օգտակար է, բայց յաւիտենականութեան յիշատակը աւելի զօրեղ, հզոր և պտղաւէտ է բարին գործելու համար, սորա համար կոյսերը պահեցին կուսական մաքրութիւնը. ճգնաւորները՝ իւրեանց անձը տուին խիստ վշտերի և զրկանքների, Մարտիրոսները սաստիկ և անողորմ չարչարանքներ կրեցին, իւրեանց տանջանքներումը զօրանում էին ոչ այնքան մահուան՝ որքան յաւիտենականութեան սուրբ երկիւղիցը:

Անհաւատ փրկիստիանները թէև մահից յետոյ՝ յոյս չունէին անմահական կեանքի, սակայն միմիայն մահուան յիշատակի զօրութեամբ, աշխարհի ունայնութիւններից հրա-

ժարվում էին, նորա մեծութիւնները արհամարհում էին, իւրեանց գործերը կարգաւորում էին, և վարքերը բանականութեան և առաքինութեան համեմատ ուղղվում:

Եպիկտետոսը խրատ էր տալի, որ մեր մտքի խորքերըները պէտք է մահուան շուրջը մտածողութեամբ ըզրադուած լինին: «Այսպէս բնաւ երբէք մի որ է նուաստ բան չես մտածել, և մի որևէ մէկ բանի սատկապէս չես ցանկանալ»: Պղատոնն ասում էր. «Մարդն այնքան աւելի իմաստուն կլինի, որքան աւելի ուժեղ մտածէ մահուան վերայ»: Եւ այս պատճառաւ իւր աշակերտներին հրամայում էր բոքիկ ոտքով ճանապարհ գնալ, ցոյց տալով թէ՛ այս կեանքի ճանապարհորդութեան մէջ՝ հարկաւոր է մահը միշտ աչքի առաջ ունենալ:

Իսկ քրիստոնեաներն՝ որոնք հաւատում են հանդերձալ կեանքը, պէտք է մահուան յիշատակի վերայ աւելացնեն և յաւիտենականութեան յիշատակը. իսկ թէ որչափ օգտակար է յաւիտենականութեան յիշատակը՝ քան մահուան. կարելի է զանազանութիւնիցը տեսնել, որ ժամանակաւորի և յաւիտենականի մէջն է: Փրկիստիանների մէջ, որ մահուան յիշատակի համար լինում էր շարժումն, այս բանի համար էր, որ նորանք այնպէս էին համարում՝ որպէս թէ այս ցաւալի կեանքի բոլոր բաները մահով են վերջանում: Այս պատճառաւ, ոմանց ցանկալի է մահը այն դիտաւորութեամբ՝ որ նորանով իւրեանց թշուառութիւնները կվերջանային:

Արդ՝ եթէ մահը այնքան սարսափ է պատճառում միայն այն բանի համար՝ որ այս կեանքի բարիքը նորանց ձեռքիցն խլվում է, և որոնք առանց այն էլ սովոր են հազար ու մէկ միջոցով խուրձնոյն նոյն իսկ տիրոջը կենդանի ժամանակում, որովհետև այս կեանքի բարիքը՝ լի են կերպ կերպ վտանգներով և ցաւերով: Ուրեմն յաւիտենականութիւնը ինչո՞ւ չէ՞ կարող մեզ աւելի ուժեղ շարժել, քան որ խոստանում է մեզ մշտնջենաւոր և մեծամեծ բարիքներ, և սպասում է անվախճան և սաստիկ չարիքներ:

Ձկնոն փրկիստիան փափագում էր ունենալ մի զօրեղ

միջնորդ իւր վարքը կանոնաւորելու և զգայական ախորժակը սանձնելու և առաքինութեան օրէնքները պահելու համար, գնաց մի Բագին (մեհեան, կուռքերի տաճար) նորանից մի խրատ առնելու: Եւ նա դնելով նորա առաջ մահուան յիշատակը, նորան ասաց. «Դնա մեռածների մօտ, նորանց հարցրո՛ւ, և նորանցից կսովորիս, թէ քո վարքը ինչպէս պէտք է կանոնաւորես»: Որովհետեւ դու կտեսնես, որ մեռածները էլ չունին այն՝ որ երբեմն ունէին. և թէ նորանց կեանքի հետ ի միասին վերջացան նոցա բոլոր երջանկութիւնները, կսովորիս կեանքի երջանկութիւնները ոչինչ համարել, և նորանցով չնպարտանալ: Այս պատճառաւ փիլիսոփաներից մի քանիսը ուտում էին և խմում. մեռածների գագաթով՝ որ միշտ յիշեն, թէ մեռնելու են. և այսպիսի սանձով՝ իրանց յետ քաշէին կեանքի բոլոր հեշտասիրութիւններից: Այսպէս էլ մեծամեծ թագաւորներն ձեռք առան մահուան յիշատակը՝ ինչպէս դեղձափ իւրեանց բարեբաղդութեանցը, որ բարեյաջողութիւնը իւրեանց վարքը չխանգարէ:

Մակեդոնացւոց Փիլիպպոս թագաւորը՝ իւր սպասաւորներից մէկին հրամայեց, որ ամեն առաւօտ երեք անգամ կրկնէ այս խօսքը. «Յիշիր Փիլիպպոս, որ դու մարդ ես, և ամեն բան մահով թողնելու ես»: Մաքսիմիանոս խռովին կայսրը, մեռնելուց չորս տարի առաջ՝ մի տապան շինել տուաւ, և ուր որ գնում էր՝ կամենում էր նորան հետն ունենալ, այն անբարբառ խօսքը լսելու համար «թէ մտածիր, որ մեռնելու ես, և ամեն բան թողնելու»: Այլև արեւելեան կայսերները՝ այլ և այլ պատուանշանների մէջ, ձախ ձեռքի վերայ ոսկի թիթեղով մի մատեան էին կրում, որին անուանում էին անմեղութիւն, և նա լի էր հողով և փօշով՝ որով կամենում էին ցոյց տալ՝ որ մարդը մահկանացու է, և յիշեցնել այն վճիռը «թէ հող էիր՝ և հող դառնալու ես»:

Արդարեւ իմաստաւից խորհուրդ ունէր՝ այն մատենի օրինակը, որ տալիս էր մեզ միտ բերել՝ թէ մահուան յիշատակը՝ որչափ զարմանալի դպրոց է՝ մեզ մոլորութիւն-

ներից և խարէութիւններից հանելու համար: Այլև թիթեղների ոսկեղենութիւնը խորհրդաւոր էր, և մատեանը ձախ ձեռքով կրելը, որ սրտին աւելի մօտ է, որ մեզ ցոյց տայ, թէ շատ աղնիւ է այս խրատը, և որը պարտական ենք մեր սրտումը տպաւորել: Իբրեւմբ այն մատեանը կոչվում էր անմեղութիւն, որովհետեւ, իմ կարող է համարձակ մեղք դրձել՝ երբ իմանայ թէ մեռնելու է: Եթովպիոյ կայսերներն աւելի ժրջան հղան այսչափ օգտակար ուսումն առնելու մէջ. որովհետեւ այն օրը՝ որ պէտք է թագով պսակէին, ի միջի իւրեանց այլ և այլ արարողութեանց՝ ունէին և այս, որ տանում էին մի աման հողով լի. և մի հատ էլ մեռածի գլուխ, որ նոյն իսկ սկզբից ի նկատի ունէին, որ իւրեանց թագաւորութիւնները վերջանալու են. և մէկ խօսքով՝ բոլոր փիլիսոփաները համաձայնեցան այս բանին «թէ ամբողջ իմաստասիրութիւնն ինչ բան է՝ եթէ ոչ մահուան մտածողութիւնը»: Յաւիտենականութիւնը մահից աւելի նիւթ է տալի փիլիսոփայութեանը, որովհետեւ մեծամեծ թագաւորութիւնների շուտափոյթ վերջանալուց աւելի սարսափելի պատիժների մշտնջենաւորութիւնն է, այս կեանքի բոլոր բարեքների անցաւոր լինելուց աւելի զարհուրելի է թշուառութիւնների անվախճան տեւելը, մահով մեր մարմնի շուտ վերջանալուց՝ աւելի զարմանալի է մեր հոգիների անմահ մնալը, ուստի քրիստոնեայններն մահից վախենալուց աւելի՝ պէտք է աշխատեն մտածել յաւիտենականութիւնը, արդարեւ հարկաւոր է, որ շատ անգամ մեր սրտի մէջ հնչէ այն անհրաժեշտ բարբառը յաւիտենականութիւն, յաւիտենականութիւն: Եւ չէ՞ թէ միայն մեռնելու ես՝ այլ մահիցդ յետոյ քեզ սպասում է յաւիտենականութիւն: Յիշիր, որ կայ անվախճան դժոխք, և կայ արքայութեանը մշտնջենական փառք: Այս յիշելը՝ քեզ աւելի կյորդորէ պահել Աստուծոյ օրէնքները, և օրէնքները պահելովդ, կամ չպահելովդ քեզ կհատուցանուի յաւիտենական վարձ. և կամ մշտնջենական պատիժ, քան դիտենալ՝ թէ այս կեանքի բարիքը քեզ համար վերջանալու են: Այնուամենայնիւ, յիշիր յաւիտենա-

կանութիւնը, որ քո հոգւոյ խորքումը կ'նշէ այս ձայնը՝
խաւիտենականութիւն, յաւիտենականութիւն:

Այս պատճառաւ ու եկեղեցին եպիսկոպոս ձեռնադրե-
լու ժամանակ, նորանց յիշեցնում է յաւիտենականութեան
զօրաւոր յիշատակը, Դաւթի խօսքն ասելով. «Մտածիր առա-
ջի օրերն, և յիշիր յաւիտենական տարիները»:

Հոռվմի քահանայապետի թագադրութեան ժամանակ,
հոգևորականներից մէկը՝ նորա աչքերի առաջ մի փոքր վուշ
սոյրելով ասում է. «Ս. Հնայր, սորա նման էլ աշխարհիս
փառքերն անցնելու են», որ նա՝ այն կրակի բոցը տեսնե-
լով՝ մտքումը տալաւորէ յաւիտենական բոցը:

Իսաքար անունը՝ որ վերը յիշեցինք, թարգմանվում է
այլ վարձու, և այն է նշանակում, որ յիշելով անում է
վարձը, և Ս. Հոգին այսպիսի խորհրդաւոր անունով՝ իմաց-
նում է մեզ յաւիտենական վարձի յիշատակը, որ դիտե-
նանք, թէ այսպիսի յիշատակը՝ Աստուծոյ առաջ իր քան ազ-
նիւ է, և իր քան օգտակար է մեզ: Աստուծոյ հրամայեց, որ
Իսաքար անունը փորագրեն պատուական Սուտակի վերայ
(Ամեթոս), որ մեծ քահանայն կրում էր դատաստանաց տախ-
տակի վերայ:

Սուտակի բոլոր յատկութիւնները մեզ յիշեցնում են
յաւիտենականութեան յիշատակը:

Սուտակն՝ առաջին, պատճառում է մարդու արթնու-
թիւն, արդեօք մարդս աւելի արթուն և զգաստ ինչ պէտք է
անէ, եթէ ոչ մտածէ, որ ինքը գտնվում է երկու ծայրերի
մէջ՝ այն է յաւիտենական փառքի և անվախճան տանջանքի:

Այն մարդն՝ ինչպէս կարող է քնել, որ մի բարձր
ժայռից անցնելու է միւս կողմը, մի կամուրջով՝ որի յա-
տակը տարափելի խոր է. իսկ կամուրջը մի գերպն է՝ կէս
ոտնաչափ լայնութեամբ, և բացի սորանից՝ ամեն կողմից
փչում են սաստիկ և ուժեղ քամիներ, որ կամուրջովն անց-
նողին ամեն մի բռնում սպառնում են վտանգներ՝ ձգելու
ոգորմելուն այն զարհուրելի վնի մէջ: Սորանից էլ փոքր չին
այս կեանքի վտանգները, որովհետեւ այն ճանապարհը՝ որ

մեզ առաջնորդում է դէպի երկինք՝ շատ նեղ է, փորձու-
թիւնների քամիները՝ խիստ ուժեղ են, մեղքերի առիթները՝
աւելի շատ, շար օրինակների վնասներն՝ մեծերից մեծ, վատ
խրատատուների խարդախութիւններն՝ շատից շատ են անա-
մար:

Դարձեալ Սուտակը մարդու ոչ միայն տալիս է արթ-
նութիւն, այլև վատ խորհուրդները նորա վերայից հեռաց-
նում է: Չգիտեմ, թէ նա՝ ինչպէս կարող է ունենալ վատ
խորհուրդներ՝ երբ մտածում է յաւիտենականութիւնը: Նա
ինչպէս կարող է մարմնի կարճատե հիշտութիւնները միտքի
բերել, երբ մտածում է՝ թէ ինչ պատիժների տանջանքի
մէջ դատապարտուած կլինի իւր հոգին՝ եթէ ծանր և մահու
չափ մեղքերին մաւանդուի տայ:

Սուտակը այլև պահում է արբեցողութիւնից, նորան
իւր մօտ կրողին անում է լուրջ և զգաստ:

Մարդկանց միտքը այս կեանքի հիշտութեան գինուցը
սուրբ և անբիծ սլահելու համար, չկայ մի ուրիշ յարմարա-
գոյն բան՝ քան հանդերձեալ աշխարհի յիշատակը:

Բացի սարկցից՝ Սուտակը թոյնլ սպանում է, և հե-
ռացնում է թոյնի մահացնող զօրութիւնը: Ուրեմն աւելի ինչ
լաւ և զօրեղ բան կարող է գտնուիլ մեղքի թոյնի դէմ՝ քան
ուշադրութեամբ մտածել զժոխքի տանջանքը՝ որոնց հարկա-
ւոր է իւրեանց մեղքի համար, և արքայութեան փառքը՝ որ
մեղքով կորցրին:

Սուտակն այլև մտքի ամբոխմունքը խաղաղացնում
է, աստ ինձ, ուրիշ աւելի ինչ զօրեղ պատճառ կարե-
լի է գտնել, որ նորանով մարդս խաղաղ և հաստատ
լինէ՝ այս կեանքի խոռվութիւններից և սանձի տակ դնէ
ազահութեան ոյժը, և զսպէ ամբարտաւանութեան գոռոզու-
թիւնը, քան յաւիտենական բարիք մտածելը, որոնց յոյս
ունին խոնարհները, և հոգւով աղքատները:

Սուտակն այլև բերում է արգասաւորութիւն (պղղա-
ւէտ, բազմարդիւն) այսպէս յաւիտենականութեան մեծ մտա-
ծողութիւնը՝ բարի գործքերի արգասաւոր է: Որովհետեւ ոչ

է, որ կենդանի հաւատով մտածէ, թէ առաքինի գործքերի համար, թէև լինին թեթև և վայրկենական, մեծ չափով կտրուի յաւիտենական փառք, միթէ նա՛ չի քաջալերուի կատարել՝ շատ առաքինութիւն և Աստուծոյ համար կրել՝ շատ զրկանք: Ո՛վ, որքան դերագանց է սուրբ մտածողութիւնը, ինձ սպասում է յաւիտենական փառքը, մարտիրոսների յաղթանակը, կոյսերի մրցանակը: Ո՞վ սուրբ մտածողութիւն, որ անզղոյշներին՝ արթնացնում և զգուշացնում էս, որ մոլորութեանը և լուսաւորում էս, որ հիւսնանքներին՝ այսպէս կատարելապէս բժշկում էս, որ մեր ցանկութեան մեղքի մեծամեծ մարիկները՝ այսպէս խաղաղեցնում էս, որ առաքինութիւններից ամուլներիս՝ այսպէս արդիւնաւէտ էս անում, երանի թէ այս ս. մտածողութիւնը՝ քրիստոնեաներն իւրեանց սրտի վերայ անջնջելի քանդակած ունենային, այնուհետև արդարև իւրեանց գործքերը՝ սովորականից շատ տարբեր կերևէին:

ՉՈՐԲՈ՞՞Դ ԳԼՈՒԽ

Յաւիտենականութիւնը մոռացողներին ողորմելի կեանքը

Յաւիտենականութեան որպիսութիւնը բացայայտելուց առաջ՝ աչքերի առաջ մի փոքր բաց անենք՝ Ազգամի որդիների խարէութիւնը և ողբալի մոռացութիւնը այսպիսի ծանրակշիւ գործքի մէջ, որովհետև այնքան անհոգ են մնում, որոնց ժամ առ ժամ սպառնում է յաւիտենականութիւնը, և նորանից աւելի հեռու չեն, այլ այնքան են՝ որքան է մի մատի հեռաւորութիւնը: Բարկացողի և յաւիտենականութեան մէջ տեղն ի՞նչ կայ՝ եթէ ոչ մի սուր խոցել սրտի մէջ:

Ձօրականի և նորա վախճանի մէջ տեղն ի՞նչ կայ՝ եթէ ոչ հրացանի մի գնդակ: Աւագակի և կախաղանի մէջ տեղն ի՞նչ կայ՝ եթէ ոչ այն տեղը՝ որ բանտից հեռու է: Վերջապէս

տեղ ու անողջ մարդու և յաւիտենականութեան մէջ տեղն ի՞նչ կայ՝ եթէ ոչ մահու անհամար հանապարհներով զալ և մեղ գլորելն է, որովհետև մարդուս կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ յաւիտենականութեան ավովը գնալու վտանգաւոր ճանապարհ, որ մի օր անպատճառ ընկնելու ենք յաւիտենականութեան անվերջ և անսահման ծոցը. զարմանալի է, որ մենք հանգիստ ու անհոգ ենք:

Հարկաւոր է այստեղ մի գեղեցիկ օրինակով ցոյց տալ մեր կեանքին սպառնացող վտանգները և մեր անհոգ ցնալը:

Մի մարդ կատաղի առիւծից փախչելով՝ ընկաւ մի մեծ և շատ խոր հորի մէջ, բայց բարեբաղդաբար ընկնելու ժամանակ ձեռքը մեկնեց և հորի բերանի վերայ բռնած ծառի ճիւղքիցը բռնեց, ելաւ ծառի վերայ՝ կարծելով թէ վտանգից ազատուել է, բայց երբ նայեց ծառի ընկնի՝ տեսաւ որ երկու մեծ մկներ՝ մէկը սև միւսը սպիտակ՝ ծառի բունը անդադար կռծում էին, այնպէս որ՝ արդէն մօտեցած էր համարվում ծառի ընկնելը հորի մէջ, յետոյ աչքը դարձնելով հորի յատակը՝ տեսաւ որ մի զարհուրելի վիշապ՝ որի աչքերից կրակներ էին արձակվում, բերանը բացած նայում էր իրան՝ որ ծառիցն վայր ընկնի և նա կուլ տայ. յետոյ աչքը ուղղեց դէպի խոր չորս կողմը, տեսաւ որ իւր չորս կողմից չորս չարաչար խժեր՝ դուխները երկաթացնում էին իրան կծելու և թռնաւորելու, և վերջը աչքերը դարձրուց ծառի վերայ, տեսաւ որ ծառի տերէնները մեղրի կաթիլներով լիքն է, այն անմիտը բոլոր վտանգները մոռանալով՝ ուրախացաւ այն մեղրի կաթիլների վերայ և սկսաւ հանգիստ ու անհոգ ժողովել այն մեղրի կաթիլները և ախորժակով ուտել, ոչ դարձնել ուշադրութիւն վերը՝ Առիւծի կատաղութեանը, ոչ ցածրը՝ վիշապի ահաւորութեան, ոչ մկների ծառը կռծելուց և ոչ չորս կողմի խժերի թռնաւորելուց, այսպէս իւր բոլոր կողմերի վտանգները մէկ կողմ թողած՝ հանգիստ վայելում էր մեղրի քաղցրութիւնը: Ճիշտ այս օրինակի նման էլ մարդիկն են վարում իւրեանց կեանքը, իւրեանց չորս կողմի վտանգները մէկ կողմ թողնելով հան-

գլխատ ու անհոգ վայելում են կեանքի սուտ հաճոյք նսմմ :

Արդ, Առիւծը մեր մահն է, որ մեր ծնած օրից մեր յետեիցն ընկած ուզում է բռնել ու վերջ ապ մեր կեանքին: Խոր հորը՝ աշխարհս է, որ լի է ամեն կերպ թշուառութիւններով ու ցաւերով:

Ժայռը՝ մեր կեանքն է. սև և սպիտակ մկները դիշերն ու ցերեկն են, որ շարունակ՝ բոպէ առ բոպէ կտրում ու սրահասացնում են մեր կեանքը: Չորս իժերը՝ չորս տարերքն են, որ մեր մարմնի կազմութեան հաւասարակչիս պահպանում են, նորանցից մէկը եթէ պակասի և աւելանայ՝ կիսանդարէ մեր մարմնի կազմութեան ներդաշնակաւորութիւնը և կսպառէ մեր կեանքը: Սոսկալի վիշապը՝ յաւիտենականութեան տանջանքն է, որ բերանը լայն ու ընդարձակ բացած սպասում է մեղաւորներին կուլ տալու: Մեղրի կաթիլները, այս կեանքի հաճոյքները, և հեշտասիրութիւններն են: Իսկ մարդկանց անմտութիւնն այնքան մեծ է՝ որ կարճատև և մի փոքր հեշտասիրութեան համար՝ ուշադրութիւն չեն դարձնում այնքան վտանգներին՝ որ իրենց շուրջը պաշարած ունին:

Մահուան վտանգներն այսպէս անհամար են, և բոլորն էլ յաւիտենականութեանը բերան ու դռներն են, այնուամենայնիւ մարդիկ զմայլած վայելում են երկրաւոր մեղրի վայրկեանական հեշտութիւնը՝ որ պահն ցաւ է փոխվելու յաւիտեանս յաւիտենից:

Ո՛վ անհոգութիւն ու անմտութիւն մարդկան, եթէ մէկը մտնէր կանաչով և դոյնազոյն ծաղիկներով զարդարած մի դաշտ՝ և այն ծաղիկների թփերի տակը թունաւոր իժերով լիքը լինէր, աչքովը տեսնէր՝ որ իրանից առաջ այն զմայլելի դաշտը մտնողներից ամեն մէկը՝ մի մի կողմ ընկնում ու չարաչար մեռնում են, իսկ նա ոչ ոքի վերայ ուշադրութիւն չգարձնելով անվախ, խաղալով ու խնդալով յառաջ գնար՝ արդեօք նորան տեսնողներն ի՞նչ կասէին, ոչ այլ ինչ՝ եթէ ոչ խելագար ու յիմար: Ո՛հ, դու աւելի յիմար ես՝ ո՞վ մարդ. որովհետև տեսար՝ որ քո բարեկամը ընկաւ մահի

բերանը, քո դրացին՝ կուլ գնաց յաւիտենականութեանը, եղբայրդ մտաւ գերեզմանի խորքը, իսկ դու անհոգ կաս՝ որպէս թէ քեզ համար՝ այնպէս բան չէ պատրաստուած: Եւ բացի սորանից՝ թէ և մեռնելը անհաստատ լինէր, սակայն դու պէտք է զգուշանայիր ամեն վտանգից, իսկ այժմ ինչ պէտք է անես՝ քանի որ հաստատ գիտես՝ թէ ուշ և կամ շուտ՝ պէտք է ընկնիս յաւիտենականութեան բերանը:

Չարմանալի է մարդկանց զգուշութիւնը՝ որովհետև անհաստատ և հեռաւոր վտանգներից շատ շուտով դուշանում են, երբոր լսում են թէ այս ինչ ճանապարհում աւտովաններն բռնել են և անցնողներին սպանում ու կողոպտում են, ոչ ոք չի վստահանալ՝ այն ճանապարհովը գնալ՝ մինչև որ լաւ դիտաւաւոր ընկերներ և կարաւանների հետ միանայ և այնպէս գնայ: Երբոր լսում են, թէ ժանտախտի լուր կայ՝ իսկոյն ամենն էլ շտապում են հարկաւոր զեղեր գնել, և այն ցաւիցն աղատուելու համար՝ ոչ մի ծախք չխնայել: Երբոր լսում են՝ թէ սովի կասկած կայ՝ բոլորն էլ շտապում են ցորենի պատրաստութիւն տեսնել, արւել գնել և հաց ամբարիւղ հոգանք անել:

Ուրեմն ինչո՞ւ համար է այս բանը մեզ, երբ մենք հաստատ գիտենք՝ որ մահ՝ կայ, Աստուծոյ դատաստան՝ կայ, դժոխք՝ կայ, և յաւիտենականութիւն՝ կայ:

Այս ամենը գիտենալով հանդերձ՝ դարձեալ մնում ենք անզգոյշ, չենք անում որ և է պատրաստութիւն և միանգամայն սնննատուր ենք եղել թմրեցնող քնին. բաւական է, և քանի շուտ է՝ զարթնենք, աչքներս բանանք, վտանգները տեսնելով, որ մեր ուշադրութիւնը ուղղինք այն տեղի վերայ՝ որտեղ մեր ոտքը գնելու ենք՝ որ յաւիտեան չկորչենք: Ահա մեր առաջ կայ անցնելու մի կամուրջ. այդ կամուրջը մի հեղ և երկար գերանից է կազմած, ցածրը՝ խոր անդունդ է թունաւոր վիշապ օձերով լի, որոնք կամուրջից ընկած մարդկանց մեքով են կերակւում. դիմացն է յաւիտենական երջանկութեան և անմահութեան դուռը, իսկ աջ ու ձախ կողմերումն՝ աշխարհիս վաղաթառամ գեղեցի-

կուհիները կանգնած անցնողներին կախարդում են զէպի իւրեանց կողմն. ողորմելի անցնողն ուշադրութիւնը նորանց վերայ դարձնելուն պէս՝ ոտքը սխալեցնում է և ընկնելով անգուշը կորչում է յաւիտեան:

Արդ՝ իրքան յիմար է այն մարդը, որ նեղ և անձուկ կամուրջն անցնելու ժամանակ՝ փոխանակ իւր բոլոր ուշադրութիւնը լարելու զգուշութեամբ իւր նպատակին հասնելու, սկսէ գեղեցկուհիների սիրահամբոյր հրապուրանքներով յափշտակուիլ՝ և վայր ընկնելով յաւիտեան կորչիլ. ուրեմն նայի՛ր, քանի կենդանի ես՝ ոտքդ զգուշութեամբ դիր ապահով տեղ՝ որ երկնքի թագաւորութիւնը ժառանգես, և մեռնելուդ ժամանակ՝ չլինի թէ ոտքդ սխալեցնես և կորչիս յաւիտեան:

Ո՛վ յաւիտենականութիւն, յաւիտենականութիւն, սրբան քիչ են նորանք՝ որոնք արժանաւոր պատրաստութեամբ քո առաջն են գալի: Ո՛վ յաւիտենականութիւն վտանգների վտանգ, և ամեն բանից աւելի վտանգաւոր՝ եթէ մէկը մեղքի մէջ մեռնի: Ինչո՞ւ մարդիկ չեն պատրաստվում քո առաջ, և ինչպէս քեզից չեն զարնուրում: Որովհետեւ մեր կեանքն ունի շատ կարճ ժամանակ, և մեր ուժերը հետզհետէ պակասելով ոչնչանում է, մեր զգայարանքները թուլանում են, մեծութիւններն վերանում են, հեշտութիւններն փախչում են, մեր շնչերն սպառվում են և մեղ իրանից քշում հեռացնում է, ուրեմն ինչո՞ւ չենք նայում այն բանի վերայ՝ որ պատրաստուած է մեզ հանգիստել՝ մեր մահից յետոյ: Գնալու ենք մի ուրիշ աշխարհ, բայց չենք գիտում, թէ իրքան ժամանակ այնտեղ մնալու ենք:

Այժմ ինչո՞ւ չենք մտածում՝ ինչ որ այն ժամանակ անելու ենք այնտեղ:

Յովհան Դամասկացին ասում է. Մի մեծ ու բազմաժարդ քաղաք կար, նորա ընակիչներն սովորութիւն ունէին իւրեանց համար մի օտարականի թագաւոր ընտրել, որը չէր իմանում թագաւորութեան հանգամանքները, ոչ օրէնքները և ոչ էլ կառավարութեան կարգը. մի ամբողջ տարի

թողնում էին նորան՝ իւր ուղածին պէս կառավարել, ինչպէս իւր կամքն էր բարեհաճում, և այնպէս երբոր սովորում էր թագաւորական երջանկութեան մէջ վայելել կեանքի քաղցը հաճոյքները. դժբաղդեցնող տարին էլ շուտով լրանում էր, և յանկարծ բոլոր ժողովուրդը վեր էր կենում թագաւորի վերայ, նորան շուտով մերկացնում էր թագաւորական զգեստներից. և այնպէս մերկ անց էր կացնում քաղաքի հրապարակով և տանում մի հեռաւոր և անծանօթ կղզի և այնտեղ թողնում, որտեղ ողորմելին չուենալով ուտելիք և հագնելիք՝ կրում էր յետին աղքատութիւն, և այսպէս իւր հաւատացած երջանկութիւնը դառնում էր՝ յետին թշուառութիւն. մեծութիւնը՝ յետին աղքատութիւն. ուրախութիւնը՝ յետին տրտմութիւն. լի սեղանը՝ քաղց և ծարաւ, և թագաւորական ծիրանին՝ ողորմելի մերկութիւն:

Սակայն մի անգամ պատահեց՝ որ մէկն ընտրուեց թագաւոր, սա լինելով իմաստուն և խորագէտ մարդ, իւր խորհրդականների մէկիցը տեղեկացաւ այն քաղաքացիների զարմանալի սովորութիւնը, որով սկսեց չափաւորել իւր թագաւորական իշխանութիւնը և աշխատել իւր անցաւոր հարստութիւնը այնպէս բարեկարգել՝ որ երբ իրան թագաւորութիւնից իջեցնեն և աքսորեն այն հեռաւոր կղզին, այնտեղ սովամահ չկորչի. ինչպէս կորել են իւր նախորդ թագաւորները: Երբոր սկսել էր իւր թագաւորական իշխանութիւնը վարել՝ սկսաւ մի կողմից ժողովրդական գանազան գործքերը բարեկարգել. միւս կողմից իւր հաւատարիմ մարդկանց ձեռքով թագաւորական գանձերը փոխադրել այն հեռաւոր կղզին. այլև տեղափոխել ամեն տեսակ հացահատիկներ և զարգարել կերպ կերպ պտղատու ծառերով՝ շինել պալատ և գեղեցիկ ծրագրով գանազան շինութիւններ՝ և միանգամայն կազմակերպել մի հիմնալի քաղաք. լի բարեկիրթ ժողովրդով, և իմաստուն պաշտօնեաներով, որոնց պատուիրել էր որ իւր որոշած օրը սպասեն իրան թագաւորական փառքով ընդունելու իւր համար պատրաստած պալատում: Երբոր տարին լրացաւ, ժողովուրդն իւր

սովորութեան համաձայն ոկոնց թափաւորին աթոռիցն իջեցնել, ծիրաներից մերկացնել և ուղարկել այն սովորական հեռաւոր կղզին, իսկ թագաւորը այն անպատվութիւնները և անարգանքը բանի տեղ չէր դնում, որովհետեւ իմաստութեամբ աջգէն պատրաստել էր իրա համար նոր և մըշտնջնաւոր թագաւորութիւն, և երբոր նորան մերկ տարան այն հեռաւոր կղզին՝ այնտեղի ժողովուրդը և պաշտօնեաները նորան հազցնելով թագաւորական զգեստները և ծիրանին՝ մեծ հանգէսով և մեծ ուրախութեամբ տարան և քաղմեցրին իւր հաստատ թագաւորութեան աթոռում:

Արդ, այն մեծ քաղաքը՝ անցաւոր աշխարհս է, որ ամեն մարդ հաւատում է՝ որպէս թէ ինքը գտնվում է հաստատուն աթոռի վերայ, հարուստ և բարձր վիճակի մէջ՝ բայց յանկարծ չկարծած ժամուն՝ ոտքից մինչև գլուխը մերկցնուելով ուղարկվում է արքայի օտար և բոլորովին մի անծանօթ աշխարհ. դէպի յաւիտենական կորուստը, որտեղ թէև չեն միանում՝ այլ կենդանի են, սակայն յաւիտեան տանջվելու համար. տանջուելու այն մութ և խաւարի մէջ որտեղ չէ լինելու լոյս՝ այլ մշտնջնաւորապէս պատելու է յաւիտենական մառախլապատ խաւարը: Այս պատճառաւ, նա միայն իմաստուն է, որ այս ամենը մտածելով՝ որ քիչ ժամանակից յետոյ պատահելու են իր ան այս աշխարհից դուրս գալուց առաջ՝ պատրաստութիւն կտեսնէ՝ յաւիտենական կեանքը մտնելու համար, ուստի այս կեանքի մէջ ունեցած բոլոր հարստութիւնը՝ գեղեցիկ կերպով կդնէ գործածութեան՝ կշիռն է կեկեղեցի, ուսումնարան, ընթերցարան, աղքատանոց, որբանոց, օտարականների համար՝ հիւրանոց, չքաւորների համար՝ արհեստանոց, սովից՝ կերակուր, գետերի վերայ պէտք եղած տեղերը կամուրջներ, այս կերպիւ իւր բոլոր գանձերը կանցնէ այն աշխարհը՝ որտեղ ունենալու է յաւիտենական բնակութիւն, այնտեղ տեսնելով իւր բոլոր հարստութիւնը հաստատ իւր ձեռին՝ կուրախանայ, որովհետեւ հետը տարած այն այն հա-

ջըստութիւնը՝ անպատմելի փառքերով՝ վայելելու է յաւիտեանս յաւիտենից:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ի՞նչ է յաւիտենականութիւնը

Արդ՝ սկիզբն անհնր փոքր ինչ բացատրել այն՝ որ անբացատրելի է. մտքով հասնել նորան՝ որ անհասանելի է, որ մարդիկ իմանալով նորան՝ թէ ի՞նչ է յաւիտենականութիւնը՝ որ մեղք գործելուց զարհուրին, այլև զարհուրին առաքինութեան գործքերը թողնելուց: Հոգեմայեցուց ներոն կայսեր Ագրիպինա մայրը, տեսնելով իւր որդւոյ շռայլութիւնը, որ ոսկին և արծաթը ջրի պէս ցրվում էր. կամեցաւ նորա շռայլութիւնը զսպել, ուստի մի օր՝ երբոր Նիւրնը հրամայեց դրամներ լին մեծ գումար պարգևել մէկին. մայրը այն մեծագումար դրամները դիզել տուաւ նորա առաջ և բոլորը ի միասին ցոյց տուաւ որդւոն՝ որ նա՝ իւր աչքովը տեսնէ, դրամների այն մեծ կիտուածը, և իմանայ՝ թէ որքան է իւր պարգևածը և այսպէս չափ դնէ շռայլութեանը:

Այս օրինակի համեմատ՝ մահկանացուների կործանման և յիմարութեանը չկայ ուրիշ ճար և հնար, եթէ ոչ դնել նոցա աչքերը առաջ այն՝ որ կորցնում են, և փչացնում մի փոքր քաղցրութեան համար, որ Աստուծոյ օրէնքին հակառակ է, որովհետեւ վայրկենական հեշտութեամբ՝ անհոգութեան են տալի մշտնջնաւորը: Այս կէտումը հարկաւոր է մտածել, թէ ի՞նչ է մշտնջնաւորը կամ տնվախճանը, ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ տեղի միշտ և մնալ յաւիտեան, բայց ով կարող է այս բանը մեղ պարզաբանել, որովհետեւ յաւիտենականութիւնը մի անշափ և անյատակ Ովկիանոս է, մի խոր և խաւար անդունդ է, որտեղ մարդկային մտքի կարողութիւնը ընկղմելով անհետ է լինում, մի լաթիւրինոտութիւն (լաթիւրինթոս-պարսպապատ մի ընդարձակ շինութիւն է, թէ՛ տեղումը շինուած փոքր՝ բայց հրաշալի հովանոց. որի

շուրջը կան բազմապտոյտ ճանապարհներ, բարձր պատե-
րով իրարից զատուած, բազմաթիւ պտուտակաւ ճանա-
պարհները այնպիսի հնարագիտութեամբ խառնվում են իրար,
որ ներս մտնողը՝ դուրս գալու հնար չգտնելով մոլորվում է:

Այսպիսի լաբիրինթոսները հաշվում են չորս. ա, կրե-
տական՝ որ միւսներից աւելի շքեղակերտ էր: բ, եգիպտա-
կան. գ, Լեմնիական. դ, Իտալական): Որից ոչ ոք կարող է
դուրս գալ, մշտակայ ներկայութիւն է՝ որ չունի ոչ ան-
ցեայ և ոչ ապագայ, մի անընդհատ բոլորակ է, որ չունի
սկիզբն, և ոչ վերջ, մի երկարաձիգ տարի է՝ որ միշտ ըս-
կիզբն է՝ չունի վերջ:

Միով բանիւ, յաւիտենականութիւնը մի այնպիսի ինչ
է, որին խելը չի հասնիլ, այլ պէտք է միշտ սովորել: Յա-
ւիտենականութիւնը ոչ ժամանակ է, և ոչ ժամանակի մասն,
որովհետեւ ժամանակը և իւր մասերն անցնում են, իսկ յա-
ւիտենականութիւնը՝ չի անցնում և չի անցնիլ: Որովհետեւ
բոլոր տանջանքները՝ որ մի հոգի գոծութեւն մտնելուն պէս
սկսում է կրել. նորան անթերի և անպակաս չարաչար տան-
ջելու են՝ բիւրուտոր տարիներից յետոյ էլ այնպէս՝ ինչպէս
սկզբումն էր: Մի բարի մարդ՝ երկինքը մտնելուն պէս՝ ինչ
զուարճութիւն՝ որ ընդունում է՝ նորանից ամենեւին մի կէտ
արգամ չի պակասի:

Ժամանակի յատկութիւնը՝ ծնում է ընաւորութիւն, որով
խառնութիւնը վերցնում է, և գուարները հեշտացնում
և այսպէս, ինչ որ սկզբումն նոր և գուարին էր՝ ժամանակ
անցնելուց յետոյ՝ սովորութեամբ լինում է դիւրին: Իսկ
յաւիտենականութիւնը՝ միշտ ամբողջ և անթերի է, միշտ
նոյնն է, նորանից և նորայիններից ոչ մի կէտ չի վերացնում,
այլ անփոփոխ կայ և կմնայ միեւնոյն: Նորա ուրախութիւն-
ներն՝ չունի իրա մէջ ձանձրութիւն, և ոչ տանջանքներն՝
որեւէ թուլութիւն: Յաւիտենականութիւնն է անփոփոխու-
թիւն, անմահութիւն և անապականութիւն, որ չի անցնիլ,
և չի կորչիլ, այլ միշտ կայ և կմնայ միեւնոյն: «Եթէ փայտն
ընկնի հարաւ և կամ հիւսիսի կողմը, ուր որ փայտն ընկնի.

այնտեղ կմնայ: Ժողով. Ժա. դ. :» Եթէ մէկն ընկնի գոծութի
անդունդների խորքը՝ այնտեղ միշտ և յաւիտեան կայրուի,
այն բոցի մէջ ընկնելուն, նորան օգնող ոչ ոք չի լինի, նո-
րան ոչ ոք չէ կարող հանիլ այն բոցից, և որքան որ Աս-
տուածն՝ Աստուած է, նա այնտեղ կտանջուի և չի կարող
մէկ կողմից միւս կողմը շրջել. որովհետեւ յաւիտենականու-
թիւնը անփոփոխ է, անմահ է, անվախճան է, և անտահ-
ման է:

Այս կեանքի ցաւերն՝ որքան և անտանելի լինին՝ այ-
նու ամենայնիւ իւրեանց մէջ այս մխիթարութիւնն ունին.
որ կամ փոփոխութեամբ թեթեւանում են, կամ վերջանում.
և կամ ապականութեամբ պակասում, որոնցից դուրս են
յաւիտենական ցաւերն, որովհետեւ փոփոխութիւնը՝ նոցա չի
տալի մի որ և է թեթեւութիւն, վերջանալը՝ մի որ և է
հնար, և մեղմանալը՝ մի որ և է մխիթարութիւն:

Արդ՝ մանանայն՝ այն ախորժածաշակ և առողջարար
կերակուրը՝ որի նմանը չէ եղել աշխարհումս, միայն՝ նոյնը
ամեն օր շարունակ լինելու համար՝ մարդկանց զգուշի
եղաւ. ուրեմն ի՞նչ են լինելու այն խիստ տանջանքները՝ որ
մնալու են միշտ նոյն որպիսութեան մէջ:

Ծոփն ունի մակընթացութիւն և տեղատուութիւն, այս-
ինքն ջրերի աճումն և նուազումն: Գետերն ունին իւրեանց
յորդութիւնը: Մոլորակներն հայեցուածների այլեայլութիւն:
Տենդերի խիստ բորբոքումները՝ սաստիկ զայրանալուց յե-
տոյ՝ իջնում են: Աւելի զօրեղ ցաւը՝ երբ բարձրանում է
դառնութեան վերջին աստիճանը՝ այնուհետեւ կսկսի իջնել
և մեղմանալ: Միայն յաւիտենական տանջանքներն այս կա-
նոնը չունին:

Եւ այսպէս Կայնի տանջանքներն ինչ որ եղան մին-
չեւ այսօր՝ մօտաւորապէս 7000 տարի՝ նոյնն են այժմ այո-
քան տարիներից յետոյ:

Ինչ որ այժմ են՝ նոյնը կմնան այսքան տարիներից
յետոյ էլ, նոցա մասերը հաւասարվում են Աստուծոյ յաւի-

տեղնականութեան հետ, նորա թշուառութեանց տեղողութիւնը՝
զուգընթաց է Աստուծոյ փառաց տեղողութեանը:

Ողորմելի դատապարտութեանը մնում են տանջուելու
համար, և մեռնում են՝ չվայելելու համար, և չունին ոչ
կեանքի հանգիստ, և ոչ մահուան վերջ. մահաւանդ այն մեծ
տանջանքների մէջ՝ ունին մահուան տագնապ և կեանքի
տեղողութիւն: Իսկ արդարներն նոցա հակառակ՝ կունենան
այն երջանիկ բաղդը՝ որ մեռնելուն պէս, լինում են Աստու-
ծոյ բարեկամ և սիրելի. որովհետեւ նոցա փառքը՝ կլինեն
անվախճան և անտրտում. նոցա երջանկութիւնը՝ անփոփոխ
և անծերանալի. նոցա պսակը՝ անապական և անթառամ,
որտեղ հաստատ կմնան նոցա զուարճութեան օրերը, որտեղ
նոցա ուրախութիւնը միշտ նոր կմնան. նոցա փառքը մըշ-
տնջենաւորապէս կնորոգուին, այն երանութիւնը՝ որ մի
արդար 7000 տարի առաջ վայելել է, այն վայելումը այսօր
էլ նոր է, և յաւիտեան նոր է լինելու:

ՎԵՅԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Դարձեալ, Ի՞նչ է յաւիտենականութիւնը

Յաւիտենականութիւնն է՝ անաւարտելի կեանքի՝ բո-
լորը միանգամայն, և կատարեալ ժառանգութիւն:

Այս սահմանը թէև իսկապէս յարմարում է Աստուծոյ
յաւիտենականութեան, սակայն կարելի է յարմարել և բա-
նական սակզծութեան յաւիտենականութեանը, որ ժառան-
գում են: Որովհետեւ սորանք էլ ունին յաւիտենական կեան-
քի մէջ՝ բարեաց ամբողջ և կատարեալ ժառանգութիւն. յի-
շուր նորան կոչեց ժառանգութիւն. որովհետեւ չկայ լաւա-
քայն և կատարելապէս վայելելու մի կերպ, եթէ չունենայ
ժառանգութեան վերաբերութեամբ կատարեալ տիրապետու-
թիւն, ըստ որում, ով որ մի տուն և կամ մի այգի վարձով
կունենայ՝ թէև նորան վայելում է, բայց նորա տիրոջ կամ-
քի համաձայն, և ոչ իւր ազատ կամքի: Յաւիտենական ժա-

ռանգութիւնն է «բոլորը միանգամայն՝ և կատարեալ», որով-
հետեւ առանց մի բանի պակասութեան բոլոր բարութիւններն
ունի և ամենին հաւասար, ըստ որում հարկ չկայ՝ այն բա-
րութիւնները վայելելու միջոցին՝ մէկը միւսին յաջորդէ, որով-
հետեւ կարող են բոլորը ի միասին վայելիլ. այս մեծ կա-
տարելութիւնը այս կեանքի բարութիւններն չունին: Եւ
եթէ մէկն ունենայ ամեն տեսակ բարութիւնները, չի կա-
րող բոլորը ի միասին վայելիլ, այլ կարող է յաջորդու-
թեամբ մէկը՝ միւսից յետոյ:

Թագաւորների մէջ Սողոմոնը, որ բոլոր թագաւորնե-
րից վերադանցն էր՝ թէ իմաստութեամբ, թէ ուժով և թէ
հարստութեամբ, աշխատեց աշխարհիս բարութիւնները վա-
ելիլ, բայց չկարողացաւ բոլորը ի միասին և միեւնոյն ժա-
մում վայելիլ. այլ վայելեց յաջորդաբար՝ մէկը միւսից յե-
տոյ. և յագեցնելով ասաց. «Ունայնութիւնք ունայնութեանց՝
ամենայն ինչ ընդունայն է»: Իսկ երկնքումը՝ արդարեւորն
ոչ մի բարութիւն չի պակասի, և հարկ էլ չկայ, որ մէկը
միւսից յետոյ վայելին, որովհետեւ բոլորը ի միասին ընդ
միշտ վայելելու են: Ուրեմն յաւիտենականութիւնն ի՞նչ է,
յաւիտենականութիւնն է լի ու լի կեանք, շարունակ և միշտ
ամբողջն ի միասին: Որովհետեւ այնտեղ կլինեն ականջների
կեանքը՝ քաղցրաձայն երգերով լի ու լի, հոտոտելիքների
կեանքը՝ անուշահոտութիւնների բուրմամբ լի ու լի, աչքերի
կեանքը՝ բոլոր գեղեցկութեամբ լի ու լի, մտքերի կեանքը՝
ստեղծողի ճանաչելովը լի ու լի, կամքի կեանքը՝ Աստու-
ծոյն սիրելով և վայելով լի ու լի:

Բայց այս մեր ժամանակաւոր կեանքը՝ չի կարող ու-
նենալ այս լիութիւնները և յագեցնել՝ մինչև անգամ փոքր
բաների մէջ, որովհետեւ պարապելով՝ զգայութեան մի հա-
ճոքի մէջ՝ կարգելուի միւսը, և մարմինը իւր հեշտութեամբն
հակառակ կլինի հոգւոյ հեշտութեանը. իսկ յաւիտենական
երջանկութեան մէջ՝ կեանքը լի ու լի կլինի, բոլորը ժա-
ռանգութիւն, և ուրախութեան կատարեալ զմայլումն, այն-
տեղ ոչ առարկայի տկարութեան, ոչ զգայութեան արգել-

ման, ոչ հոգւոյ անընդունակութեան, և ոչ տևողութեան կարճութեան համար՝ կխափանուի բոլոր զգայութիւններով բարութեանց մէջ վայելումը:

Սորանց հակառակը պէտք է տեսնել մեղաւորներին, որոնք մշտնջենաւոր թշուառութեանց մէջ, կարգաւ ունին նոյն հանգամանքներն դէպի չարը, ինչպէս որ արդարներն կարգաւ ունին դէպի անանցանելի բարին: Որովհետեւ այն թշուառներն ամբողջ մարմնով և ամբողջ իւրեանց գոյութեամբ կմնան տանջանքի մէջը. ոչ թէ ինչպէս մի փոխ առած բան՝ այլ ինչպէս մի ժառանգութիւն՝ այնպիսի յատկութեամբ, որոնց չեն կարող հեռացնել իրանցից, և այսպէս չէ՝ թէ միայն իրանք կստանան չարիքը, այլ նոյն իսկ չարիքն նորանց բոլորովին կգրաւեն:

Որովհետեւ զգայարանները, անդամները, և մարմնի բոլոր մասերը, որոնց հետ այլև հոգւոյ զօրութիւնները, և հոգեկան կարողութիւնները կտանջուին կրակից, դառնութիւնից, ցաւերից, նախատինքից, մոլեգին բարկութիւնից և անէծքներից: Չկայ որ և է մի թշուառութիւն, որ այնտեղ չլինին, չի պակասիլ ճաշակելիների լեզին, ախորժակի քաղցը, լեզուի ծարաւը, աչքերի սարսափը, ականջների ահեղագոյ զարհուրանքը, հոտոտելիների գարշահոտութիւնը. սրտի տանջանքը, երեակայութեան երկիւղը, ամեն մի անդամի ցաւը, աղիքների և փորոտիքների կրակը: Եւ այս բոլոր չարիքները՝ ինչպէս մշտատե հեղեղ՝ թափուելու են մեղաւորների վերայ:

Արդ՝ եթէ միմիայն կաթիլը՝ կարող է քարի վերայ փոս փորել, և քառասնօրեայ ջրերի անձրևները կարողացան աշխարհը ջնջել, ապա ի՞նչ կլինի, երբոր Աստուծոյ բարկութիւնը թափէ մեղաւորների վերայ կրակ, ծծումբ և մրրիկ՝ ոչ թէ միայն քառասուն օր, այլ անվերջ յաւիտեան, որքան Աստուածն Աստուած է: Եւ ոչ միայն այն ազգետալի ստացումը բոլոր չարիքները կըկուտակէ բոլորը միեւնոյն ժամանակի մէջ, այլ տանջանքի շատութիւնը զգալն էլ՝ աւելի կստատկացնէ. օրինակի համար՝ կրակը չէ՞ թէ միայն կթա-

փանցէ ոսկորները, սիրտը, աղիքները, այլ անմիջապէս՝ անշէջ և անվախճան այրելու է տոչորելով և հոգին:

Մեղաւորների տանջանքը լինելու են բոլորական, որովհետեւ կրելու են բոլոր չարիքները: Կատարեալ, որովհետեւ կրելու են ամբողջ չարիքն ի միասին: Լի ու լի, որովհետեւ կրելու են բոլոր զգայութեամբ, կարողութեամբ և զօրութեամբ:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ղարծնալ ի՞նչ է յաւիտենականութիւնը

Յաւիտենականութիւնը՝ իւր մէջն ունի ամփոփած՝ բոլոր անցեալ ներկայ և ապառանի ժամանակները, և այս պատճառաւ՝ ոչ օրերը, ոչ ամիսները, ոչ տարիները և ոչ դարերը կարող են նորան յագեցնել: Նա կլանում է բոլոր ժամանակները, և նորա փորը միշտ ընդունակ է անվերջ կլանելու, որովհետեւ իւր մէջն ունի բոլոր ժամանակներն, և ինչ որ մի բոլորումն ունի՝ նոյնը յաւիտեան ունի:

Յաւիտենականութիւնը մի մշտնջենաւոր վայրկեան է՝ որ վերջ չունի. իսկ այս կեանքի մէջ՝ ժամանակը մի անցողական վայրկեան է, որից չունինք մի ուրիշ մասն՝ եթէ ոչ ներկայն որ միշտ հոսում է և գնում: Այսուէս էլ յաւիտենականութիւնը՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անշարժ և մնացական վայրկեան. որովհետեւ նորա վերայով յաջորդաբար անցնում են ժամանակները, և բոլորի մէջ անփոփոխ և ներկայ է գտնվում. ժամանակը և բոլոր ժամանակաւորներս՝ նման ենք մի սրբութաց գետի, որի աղիքները շտապով իրար յետեից իրար առաջ են վարում, առանց ընթացքիցը դադարելու, իսկ յաւիտենականութիւնը՝ գետի յատակի նման է, որի վերայովը ջրերը շարունակ անցնում ու գնում են:

Յաւիտենականութիւնը շրջանակի մէջ տեղի կէտի նման է, որտեղից միեւնոյն վայրկեանի մէջ տեսնում է ամբողջ շրջանակը և հաւասարապէս նորա վերայի բոլոր կէ-

տղրը, այսպէս յաւիտենականութիւնը մի վայրկեան է, որ իւր արժողութեամբն հաւասար է անվախճան ժամանակներին, նա տեսնում է բոլորը, և այն ամենը՝ որ բոլոր դարերի մէջ գալու են, և զարմանալի կերպով՝ միշտ ներկայ է։

Եւ այսպէս մեր առաջն է գնում, մի շատ նկատելի բան, որն այս է, թէ բարին՝ որի հետ միաւորած է յաւիտենականութիւնը՝ անհուն բարեգոյն է, այն էլ կրկին կերպիւ, այսպէս էլ չարիքն՝ որոց հետ միաւորուել է յաւիտենականութիւնը՝ անհուն չարագոյն է, նոյնպէս կրկին կերպիւ։ Առաջին կերպն այն է, մի բան՝ որքան աւելի է տեսնում, այնքան մեծ համարումն է ունենում, իսկ եթէ անվախճան տե՛՛ն այն ժամանակ անչափ մեծ համարումն կուտենայ։

Այսպէս՝ մի որ և է թեթեւ չար՝ եթէ տեսողութեամբն անվախճան է, անցնում է բոլոր այն դժնդակագոյն չարիքներից՝ որոնք վախճան ունին։ Եթէ մէկի առաջ դնեն երկուսից մէկն ընտրել, կամ կրակով բորբոքուած հոգի մէջ մնալ և կրել հիւանդութեան բոլոր տեսակ ցաւերը, այլև տանջանքների բոլոր տեսակները՝ ինչ որ կրեցին մարտիրոսները և չարագործները, և այս ամենը կրել ո՞չ թէ մի փոքր ժամանակի մէջ՝ այլ միլիօնաւոր դարերի մէջ, միայն թէ ժամանակին վերջանան։

Եւ կամ ընտրէր կրել միայն գլխացաւ և կամ սոսկ մի առամնացաւ՝ միայն յաւիտեանս յաւիտենից. հարկաւ պէտք էր ընտրել այն իրար վերայ բարդուաց հազարաւոր դժնդակ ցաւերը ու տանջանքները, քան թէ այն մի ցաւ միայն, որովհետե՛՛ թէ և նորանք մեծութեամբն ու շատութեամբն գերազանց են, իսկ սա տեսողութեամբն գերազանց է նորանցից։

Եթէ ընտրելի է լինում տանել դժոխային խիստ տանջանքները՝ թէ լինէին ժամանակաւոր, քան յաւիտենական թեթեւ ցաւը, ուրեմն մարդիկ ինչպէս չեն յանձն առնում համբերութեամբ տանել այս մեր կարճ կեանքի մէջ՝ թեթեւ

ցաւերը ու նեղութիւնները, որ չկրենք դժոխային տանջանքները յաւիտեան։

Ինչպէս չենք վախենում յաւիտենական ցաւից՝ երբ վախենում ենք ժամանակաւոր ցաւից, ինչպէս չենք մտածում յաւիտենականութիւնը, ինչպէս մոռացութեան ենք տուած մեր հոգեկան պարտականութիւնները, ինչպէս չենք յանձն առնում համբերութեամբ կրել այս կեանքի մէջ, մեղքածին վիճակուած դառնութիւնները և ցաւերը, որ յաւիտենականութեան մէջ չկրենք անվախճան տանջանքները։

Ո՞վ յանձն կառնէր՝ այս կեանքի միլիօնաւոր տարիները հարստութիւնները, զգայալանքների կերպ կերպ զուարճութիւնները, փոխել յաւիտենական մի թեթեւ ուրախութեան հետ։

Արդ՝ եթէ այս այսպէս է, ուրեմն ինչպէս է՝ որ այս երկրաւոր ու անցաւոր մի ուրախութիւնը՝ փոխում ենք անչափ ուրախութիւնների հետ, որ մեղ համար՝ պատրաստուած կան յաւիտեան վայելելու։ Պէտք էր և իրաւ աշխարհի բոլոր ժամանակաւոր բարիքը տալ և ստուգութեամբ գնել այն մը բարին՝ որ յաւիտեան տեսնու է։ Ուրեմն ինչո՞ւ ստուգութեամբ չենք աշխատում ձեռք բերել անանցանելի բարիքը՝ զրկելով մեղ գոնէ երբեմն ժամանակաւոր բարիքներից։ Մարդս աւելի բաւականանում է ժամանակաւոր փոքր ինչ գանձերով՝ որ վաղը մահով առնելու են նորանից, և վուցէ այսօր և եթ աւաղակը նորանից յափըշտակելու է, քան ցրուելով ժողովրդի օգտին՝ աշխատել ստանալ երկնքի յաւիտենական դանձր։

Եթէ Աստուած հանդերձեալ կեանքի մէջ խոստանաւոր մեղ ոչ այլ ինչ, բայց միայն՝ մի զգայութեան անվերջանալի հեշտութիւն՝ յիրաւի արժան էր թողնել աշխարհի բոլոր անցաւոր հեշտութիւնները, ուրեմն տես, թէ որչափ մեծ է մարդկան անմտութիւնը։ Խոստացվում է մեղ յաւիտեանս յաւիտենից անվախճան բիւրակերպ ուրախութիւն, իսկ մենք չենք թողնում այս ցաւալի և փոքր ինչ ուրախութիւնը։

Յաւիտենականութեան յատկութիւնը՝ բարիների

չարերի մէջ՝ չէ՞ թէ միայն ապառնին տեղութեամբն աճեցնում է, այլև անցեալը՝ ներկայ է անում: Այս պատճառաբերկնքումն արդարները վայելելու են չէ՞ թէ միայն այս ժամուռնեցած փառքը՝ և որոնց ապաւայումն ունենալու են, այլև այն՝ որ երբեմն ունէին. և իրականց առաքինութեանց և բարի գործքերի վերայ՝ ուրախանալուց չէին դադարելու, և այս առթիւ անցեալը, ներկան և ապագան խառն ի միասին ընթանալու են դէպի կատարելութիւն և դէպի նոցա ուրախութեանց մեծութիւնը. և նոցա երջանկութեանց վերայ բոլոր բարիքը կուտակած բարդուելու են:

Սորա հակառակ տեսնենք, թէ ժամանակաւոր բարիքը հրքան տարբեր են, որովհետև ներկաներն անգամ կատարելագէտ չեն վայելում:

Չկայ ժամանակաւոր որ և է մի երջանկութիւն, որ չունենայ մի պակասութիւն, կամ մի ցաւ, կամ մի վատնգ և կամ մի որ և է մի պատահար իրան դառնացնելու, շփոթեցնելու և կորցնելու, և այսպէս նորանից զրկուելու երկիւղն ու կասկածը չի թողնում որ անցեալը յիշողութեան մէջ բերէ մի մխիթարութիւն, մանաւանդ որ կորցնելու վախիցը՝ յառաջ է գալի այնքան մեծ ցաւ ու վիշտ, որքան որ մեծ էր առաջուայ ունեցած ուրախութիւնը:

Արդ՝ որ կողմից որ նկատենք, կտեսնենք որ յաւիտենական բարիքը՝ միշտ բարեգոյն են, և այս պատճառաւ պէտք է միշտ նորա վերայ մտածենք, նորան փափագինք, նորան հասնելու համար պէտք է ամեն կերպ ջանք գործ դնենք մինչև անգամ, եթէ հարկն ստիպէ՝ նորա համար տանք մեր բոլոր կեանքը:

Այս կեանքումը յաւիտենականութեան համար պատրաստուելով՝ պէտք է գործ դնենք Բեռնարտոսի ցոյց տուած երեք առաքինութիւնները, աղքատութիւն, հեղութիւն և ողբ, որոնցով հոգու մէջ նորոգվում է մի տեսակ նմանութիւն և յաւիտենականութեան պատկեր. որի մէջ բոլոր ժամանակը՝ բովանդակուած պարունակում է:

Որովհետև աղքատութեամբ ստանում է ապագան, հե-

ղութեամբ աւնում է ներկան և ապաշխարութեան ողբովը, կրկին ստանում է անցեալը:

Արդարև, ով որ յաւիտենականը մեծ է համարում, չպէտք է ուրիշ բաների մէջ աւելի ջանքով պարապի, քան այս երեք առաքինութեանց կրթութեան մէջ. ա, պէտք է և արժան՝ որ հոգւոյ աղքատութեամբ՝ տանջուի բոլոր ժամանակաւորներից, նորանց փոխանակելով յաւիտենականի հետ. բ, հեղութեամբ և համբերութեամբ աշխատի բարին գործել, յաղթէ առաքինութեանց դժուարին արգելքը, գիտենալով՝ որ այսպիսի թեթև վշտաց և աշխատութեանց համար՝ պահվում են մեծամեծ վարձքեր:

Ո՛վ է, որ աչքովը տեսնէ երկնքի փառքը և դժոխքի տանջանքը, երկուսն էլ մշտնջենական, և սիրտ չանէ հոգւոյ քաջութեամբ անցնել հուրը և ջուրը՝ Փրկչին հաճելի լինելու համար:

Մի անապատական գնաց անապատի վանահօր մօտ և ասաց. «Հայր, միշտ սենեակի մէջ նստելով՝ ձանձրալի և տրամալի խորհուրդներն իմ անձը նեղում են»: Իմաստունը ծեր վանահայրը պատասխանեց, ասելով. «Որդեակ, բեզ այն պատճառաւ է այդ լինում, որովհետև չես միտ բերում յաւիտենական տանջանքը, որոնք մեղ համար պատրաստուած են, և ոչ անմահ և անանցանելի ուրախութիւնները՝ որոնք մեղ սիրտ ու հոգի են տալի: Եթէ դու այս ամենը մտածէիր՝ սենեակդ թէև լիքը լինէր որդունքներով, և դու նոցա մէջ թաղուած լինէիր մինչև պարանոցդ, այնտեղից բնաւ դուրս չէիր գալ, այլ առանց ձանձրանալու և զզուելու կմնայիր նոցա մէջ»:

Երրորդ առաքինութիւնը՝ որի մէջ պէտք է կրթենք մեզ, մի գովելի ցաւ ու սուգ է, որով մեղուցեալը պէտք է իւր մեղքերին քաւութիւն խնդրէ, դառն արտասուելով և ի սրտէ գղջալով, որովհետև յաւիտենական կեանքը՝ որ մեղքով կորցրել է, ապաշխարութեամբ կրկին կատանայ. թէև ասվում է՝ «Թէ եղածին՝ ճար չի լինիլ, անցածին՝ ուժ ու ջնար չի լինիլ»:

Բայց այս առաքինութիւնը այնքա՞յ զօրաւոր և ուժգն է, որ մինչև անգամ արածները ջրն ընկնէ և դարձնում, անցած մեղքը վերացնում է այնպէս՝ որպէս թէ բնաւ գործած չեն եղել:

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒՆ

Ի՞նչ է, յաւիտենականութեան վախճան չունենալը:

Թագաւորի մէկը, մի փիլիսոփայից խնդրեց, որ իրան պարզաբանէ «թէ ի՞նչ է Աստուած»: Փիլիսոփայն ժամանակամիջոց մի օր խնդրեց, որ նորա վերայ մտածէ, երբոր մի օրն անցաւ, ասաց «ինձ աւելի ժամանակ հարկաւոր է» խնդրեց երկու օր էլ, նորանից յետոյ՝ չորս օր էլ, երբոր այն օրերն անցան՝ ասաց «որչափ աւելի խորհում և մտածում եմ, այնչափ աւելի նիւթ եմ գտնում խորհելու և մտածելու, և ոչ մի կերպ չեմ գտնում, որ կարողանամ նորան պարզաբանել»: Այսպէս կարելի է ասել և յաւիտենականութեան համար, թէ նա մի այնպիսի խորին և անագիտելի անդունդ է, որ մինչև անգամ մարդու միտք չի կարող մտնել նորա քննութեան և ըմբռնման մէջ՝ առանց հեղձամուղձ լինելու:

Յաւիտենականութիւնն այն չէ՝ ինչ որ է մեր մտքի հասկացողութեանը համաձայն, այլ անհուն բարձր է մեր մտքիցը, որովհետեւ նա ոչ ժամանակ է և ոչ ժամանակի միջոց, ոչ դարեր, և ոչ բիւր դարեր, այլ միլիոններից և միլիոնաւոր յաւիտենաններից շատ բարձր է, բոլոր ժամանակներից և բոլոր ժամանակների միջոցներից շատ ու շատ և անհասկանալի բարձր է:

Յաւիտենականութիւնը չէ՝ այս կեանքը՝ որ դու վայելում ես, որը շուտով վերջանալու է, յաւիտենական չէ ուժեղութիւնդ՝ որ քո մէջ երևում է, յաւիտենական չէ՝ զբօսանքդ, յաւիտենական չեն կալուածներդ, յաւիտենական չեն գանձերդ, յաւիտենական չեն այն մեծատունները՝ որոնց վերայ ես դրել յոյսդ, յաւիտենական չեն այս բոլոր բարիք-

ները՝ այս բոլոր հեշտալի գուարճութիւնները և հրապուրելի գեղեցկութիւնները՝ որ դու վայելում ես: Յաւիտենականութիւնը մեծ ու մեծ է բոլոր թագաւորութիւններից բոլոր ինքնակալ պետութիւններից, շատ ու շատ բարձր է աշխարհիս բոլոր ու ամենատեսակ գուարճութիւններից: Յաւիտենականութիւնը արգարներն համար մի այնպիսի հրաշալի և մի այնպիսի երջանիկ առաւօտ է՝ որ բնաւ չունի երեկոյ, իսկ մեղաւորների համար՝ մի այնպիսի սոսկալի ու խաւար գիշեր է՝ որ երբէք չունի առաւօտ և երբէք չէ տեսնելու արևու լոյս: Արդ՝ եթէ խիստ տաքութիւն ունեցողից՝ քունը վախճում և սաստիկ տանջվում է, թէև պատկած է լինում փափուկ անկողնում, սակայն գիշերուայ մի ժամը՝ նորան թվում է տարի, մինչև առաւօտեան արևու ծագելը:

Որեմի ինչ կլինի նորա՞ց՝ որոնք հրեղէն անկողնում պառկած՝ անյոյս և առանց քուն լինելու, մշտապէս տանջուելու են այն մշտախաւար գիշերը՝ որ յաւիտեանս յաւիտենից չէ ունենալու առաւօտ:

Դաւիթն ու սուրբ հայրերը յաւիտենականութեանը օրինակ, որը պսակ և որը մանեկ յարմար գտան անուանել, որովհետեւ պսակը և մանեակը իւրեանց բոլորութեամբը չունին ոչ սկիզբն և ոչ վերջ. և այսպէս մեզ իմացնում են՝ որ յաւիտենականութեանը մէջ՝ մեր բարի գործքերը յաւիտեան պսակուած կլինին, իսկ չար գործքերը յաւիտեան պատժուած:

Եթէ մի մեղաւորը հարկւր հազար տարին մի անգամ մի կաթիլ արտասուք միտքն թափէր, և այսպէս հարկւր հազար տարիներ մի մի կաթիլ արտասուք թափելը՝ շարունակէր և այսպիսի շարունակութեամբ անթուելի տարիներից յետոյ՝ եթէ նորա թափած արտասուքները հաւաքարէին Ովկիանոսի և միլիոնաւոր Ովկիանոսների, գարձեալ չէր իմացուիլ թէ յաւիտենականութիւնից մի բան անցել է՝ այլ այնպէս կհամարուէր՝ որպէս թէ նոր է սկիզբն առել յաւիտենականութեան, և թէ նոյն իսկ դեռ առաջին օրն է և

նոր է դրել ոտքը յաւիտենականութեան շէմքին: Ո՛չ մի թիւ
և ո՛չ՝ որևէ մի ընդարձակ թուարանական թանգարան՝ կա-
րող են յաւիտենականութեան տարիները իւրեանց մէջ պա-
րունակել: Եւ թէ բոլոր երկիրքը թուղթ լինէր, ներսից և
դրսից լցուած լինէր թուանշաններով՝ այս բոլորը իմիասին
չէին կարող յաւիտենականութեան մի ամենափոքր մասն
անգամ ցոյց տալ դադափար կազմելու համար:

Փիլիսոփաներից ոմանք ասում էին՝ թէ ծովի աւազը
անթուելի է, իսկ ոմանք՝ թէ թուելի է՝ բայց անկարելի է
թուել: Արքիմիդեսը նոցա մոլորութիւնները ջրելու համար՝
շարագրեց մի իմաստալի փրօք և՛ ընծայեց Սիրակուսայ
Գեղոն թագաւորին, որի մէջ ցոյց էր տուել, թէ, եթէ ամ-
բողջ աշխարհը՝ լիքը լինէր աւազով, չէր լինիլ անթուելի:

Կլաւիոսը թուարանական հաշուով ապացուցեց՝ թէ որ-
չափ աւազի հատերով կարող էր լցուիլ ամբողջը հաստատու-
թիւնից սկսած մինչև հողը: Արդ՝ դնելով թէ այս ամբողջ
միջոցը լիքը լինէր աւազով, և աւազների հասը մանանխի
հատի չափ լինէր՝ դարձեալ կարելի է այնչափ աւազի բազ-
մութիւնը թուել, որ և ինքը իսկապէս թուելով ցոյց տուաւ
մի տողի վերայ միայն, որ պարունակում է իւր մէջ մի մի-
աւոր և յիսուն և մի զրօ:

Արդ՝ ենթադրենք՝ թէ այսչափ միլիոնաւոր աւազի հա-
տերի բազմութեանը՝ որ մարդուս միտքը չէ կարող ըմբռնել
մի փոքր տողի մէջ տեղաւորվում է, ապա ռըչափ անթիւ և
անհամար են յաւիտենականութեան տարիները, որոնց գու-
մարի թիւը չէ՝ թէ մատեանի մէջ կարելի էր բովանդակել,
այլ եթէ երկրի ամբողջ միջոցը մինչև հաստատութիւնը
լիքը լինէր թղթերով և այն բոլորը ներսից և դրսից լիքը
լինէր թուերով, դարձեալ չէր կարող յաւիտենականութեան
ամենափոքր մասի թուերը ցոյց տալ: Ըստ լանկաւանտիոսի,
«Ո՛րքան տարիներով կարող է յաւիտենականութիւնը յա-
գնալ, որն անվախճան է»:

Յաւիտենականութիւնից վերցրու այնքան տարիներ
ծովը որքան կաթիլներ ունի, օդը որքան շամանդաղներ

ունի, անտառները ու դաշտերը որքան տերևներ ունին, եր-
կիրս որքան աւազի հատեր ունի, ու երկիրքը որքան անտ-
ղեր՝ դարձեալ յաւիտենականութիւնը կմնար ամբողջ և ան-
թելի:

Պատկերացրու աւազի մի այնպիսի մեծ լեռան, որի
ծայրը ամենալայն ընդարձակութեամբ հասնէր երկրից մինչև
երկինք, որից մի հրեշտակ մի միլիոն տարի անցնելուց յետոյ՝
վերցնէր մի հատ աւազ և այսպէս շարունակ ամեն մի միլիոն
տարի, մի մի աւազ վերցնէ, որով կարող էր անթիւ միլիոնա-
ւոր տարիներից յետոյ այն լեռը ամբողջապէս տեղափոխել
մի ուրիշ ընդարձակութեան մէջ, և նորա տեղը հարթած ու
աւելած թողնել, սակայն յաւիտենականութիւնից ոչինչ չէր
պակասիլ, և այնպէս կհամարուէր՝ որպէս թէ՛ նոր է սկսում
առաջի վայրկիւսը:

Ո՛վ կարող է մի ամբողջ տարի համբերել՝ երբ նորա
մարմնի մի կողմը ամբողջ խորովում լինէր, և լինչ հար-
կաւոր է ասել՝ թէ մարմնի մի կողմը լինէր խորովում,
բաւական է այսքանը՝ ո՛վ կարող է մի ամբողջ տարի պառ-
կել մարմնի մի կողմի վերայ, առանց փոխելու մի կողմից
միւս կողմը: Երանի թէ, ամեն օր գոնէ կէս ժամ այս
մտածմունքն անէինք, այն ժամանակ ուրիշ կերպ կլիտխ-
ուէինք, ինչպէս որ պատահեց աշխարհասէր մարդու մէկին:

Սա իւր անձը մատնել էր աշխարհի հեշտութիւններին,
երբէք չէր կամենում մի րոպէ անգամ զրկուել նորանցից,
մի անգամ այնպէս հանդիպեց՝ որ մի գիշեր ֆուսայ արթուն,
չկարաց քուն լինել, և այս պատճառաւ ամբողջ գիշերն անց-
րեց անհանգիստ՝ երբեմն մէկ կողմի, երբեմն միւս կողմի
վերայ շարունակ դառնալով, այնպէս որ՝ ամեն մի րոպէն
նորան՝ տարի էր թվում. մինչև որ լուսացաւ:

Եւ երբոր անդադար մի կողմից շրջում էր միւս կողմի
վերայ, սկսաւ մտածելով ասել. «Ո՛վ իմ անձն, ապա ռը-
չափ անտանելի կլինի քեզ՝ եթէ այս օրինակ երկու կամ
երեք տարի անընդհատ անցնէիր խաւարի մէջ՝ առանց կե-
նակցութեան քո սրտակից բարեկամների, և առանց կատա-

քելու քո գուարձալի գոսանքները, թէև անկողինդ լինէր այսպէս փափուկ՝ դարձեալ սա կլինէր քեզ անտանելի պատիժ: Ուրիմն իմացիր, որ սորանից չես կարող ազատուիլ, եթէ վարդդ զէպի լաւը չփոխես, մի օր կընկնիս ու կ'մնաս հիւանդ մահճի մէջ, ցաւալի գլխերներ կանցնին քո վերայ, եթէ յանկարծ անպատրաստի չմեռնես, որ առաջինից քաւի շարագոյն է: Հիւանդութեան այս մահճից յետոյ՝ ուր քեզ սպասելով մնում է մահը, միտ բեր և միւս մահճի՝ որ քեզ համար պահած կայ: Որովհետեւ քո մարմինը փոխանակ անկողինի՝ կուենայ կոշտ հողը, և կծածկուի որդերով, իսկ հոգուդ համար՝ դու լինչ ստուգութիւն ունիս, ստոյգ՝ եթէ ուշադրութեամբ նայես քո առաջիկայ վարքիդ՝ չկայ քեզ համար՝ մի որ և է տեղ՝ ուր կարողանաս դնել դուրսդ, եթէ ոչ անշէջ գեհնում: Այնտեղ կան հրաբորբք և սոսկալի անկողիններ, որոնց մէջ չէ թէ երկու և երեք տարի՝ այլ ամբողջ յաւիտենականութեան մէջ կտախպուիս մնալ խաւարում և մշտնջենաւոր տանջանքներում, և անթիւ միլիոնաւոր տարիներից յետոյ՝ չես կարող քաւել քո անաւակ վարքի գոնէ մի փոքր, մի աննշան մասն անդամ: Այնտեղ բնաւ չես տեսնել ոչ արեգակը, ոչ երկինքը և Աստուածին: Վայ ինձ թշուառականիս, լինչպէս կարող եմ տանել մըշտնջենաւոր տանջանքները՝ երբ չեմ կարող տանել այս կարճ ու թեթեւ արթնութիւնը:

Արդ՝ լինչ օգուտ են ինձ այս մտածմունքները, երբ չեմ փոխում իմ գնալու ճանապարհը, որովհետեւ նորանով՝ առանց որ և է կասկածանքի գալու եմ զէպի կորուստ: Այսպիսի մտածողութեամբ նորան պատեց ան, և յաւիտենականութեան համար ստեղծման, այնպէս որ՝ չէր կարողանում ձեռք վերցնել մտածելուց՝ մինչև որ հաստատ միտքը դրեց փոխել վարքը և մտնել բարի մարդկանց շարքը սասելով. «Ո՞վ յաւիտենականութիւն, յաւիտենականութիւն, եթէ երկնքումը չես՝ ուր որ լինի՝ ծառն ու տափանելի, թէև լինիս ագնիւ ու փափուկ և ծաղկաւէտ անկողնում: Արդ

պէտք է մեզ սթափուել և զգաստանալ, որ չլինի թէ քիչ քանի համար՝ շատը կորցնենք»:

Այս այսպէս ասաց և կատարեց՝ բայց լինչպէս, ամենայն հաստատամտութեամբ և քաջութեամբ փոխեց կեանքը, շալոյն՝ եղաւ չափաւոր, հեշտասէրը՝ եղաւ մաքրակեաց, ժլատն՝ եղաւ առատասիրտ, ագահն՝ եղաւ բարեգործ՝ հայր և խնամող որբերի, այրիների և աղքատների և միանգամայն կերակրող հաղարաւորների:

Եւ այս ամենից յետոյ՝ մեր բոլոր գործքերումը պէտք է մտածենք այս, թէ մեր բարի գործքերի համար՝ մեզ տալու են անվերջ յաւիտենական վարձք. իսկ մեր չար գործքերի համար՝ յաւիտենական խիստ տանջանք:

Քրիստոսեան սորանով պէտք է քաջալերուի միշտ բարին գործել և միշտ գնալ բարի ճանապարհով:

Թեբայեցուց Իսմէնը, երբոր գեապանութեամբ գնաց պարսից թագաւորի մօտ՝ որ խօսելուց առաջ՝ պէտք է նորան երկրպագութիւն անէր, նա՝ այնչափ պատիւ ու յարգութիւն տալը՝ մի բարբարոս թագաւորի՝ աւելորդ համարեց, ուստի հանեց իւր ձեռքի մատանին, որի վերան կար իւր թագաւորի պատկերը, որը մեծ պատուոյ և իշխանութեան նշան էր, ծածուկ նորան ձգեց թագաւորի ոտների տակ՝ և երբոր երեսաց վերայ ընկաւ երկրպագութիւն աւնելու, իւր մտքումն ասաց, «Ձէ թէ քեզ, այլ մատանիքն եմ երկրպագութիւն անում»: Արդ՝ եթէ մենք էլ մեր բոլոր գործքերումը՝ մեր մտքի ձգտումը ուղղած լինէինք զէպի յաւիտենականութիւն, ոչ մի բարի գործքի մէջ չէինք գտնել զժողարութիւն: Փառք, պատիւ և օրհնութիւն ամենաբարձրիս Աստուծին, որ մեզ կտանում է տալ անանցանելի և անվախճան կեանքի վարձքը, մեր կարճ ու փոքր նեղութիւնների համար՝ որ գեաւ չենք սկսել կրելու՝ իսկոյն վերջանում են:

Յունաց հռչակաւոր բանաստեղծ Եւրիպիդէսը, վշտանում էր՝ որ երեք օրուայ մէջ չէր կարողանում յօրինել երեք տուն ոտանաւոր, մի ուրիշ բանաստեղծ տեսնելով նո-

րա նեղութիւն կրելը ասաց. «Ինչ բաւական է միմիայն մի օր՝ յօրինելու հարիւր տուն ոտանաւոր»։ Եւրիպիդէսը նորան պատասխանեց ասելով. «Դա զարմանք չէ, որովհետեւ քո ոտանաւորները կմնան երեք օր միայն, և ոչ աւելի, իսկ իմ ոտանաւորները կմնան յաւիտեան»։ Այսպէս և յայտնի նկարիչ Ջիսին, երբ նորան հարցրին թէ «ինչո՞ւ համար նկարիչ այդքան ծանր և հանդարտ կերպով ես սկսում»։ Պատասխանեց. «Ես ծանր ու հանդարտ եմ նկարում, որովհետեւ նկարում եմ յաւիտեան մնալու համար»։

Արդ, այս երկուսն էլ խաբուեցան, որովհետեւ, մէկի նկարների հետքն անգամ չմնացին մինչև օրս. իսկ միւսի գործքերի շատերը կորել են։ Բայց արգարի գործքերից և ոչ մէկը չի կորչիլ, և յաւիտենական կեանքը ձեռք բերելու համար՝ չէ հարկաւոր մի օր անգամ ցաւօք անցնել, որովհետեւ կատարեալ դարձի ապաշխարութեան մէկ ներգործութեամբը՝ կարող ենք ստանալ անվախճան ուրախութիւնը։ Ուստի պէտք է մենք էլ գործ դնենք Եւրիպիդէսի և Ջիսի մտածմունքը, ոչ միայն բարին մտածել՝ այլև բարին խոհեմաբար գործել, և նախանձել Դաւթին՝ որպէս թէ նոր էր սկիզբն անում բարին գործելու. «Ապացի այժմ սկսայ՝ Ձէ հարկաւոր մեր աչքը դարձնենք նորանց վերայ՝ որ արել ենք, այլ պէտք է աշխատենք Աստուծոյ սիրոյն համար նոր նոր բարիներ անել, ինչպէս Պօղոս Առաքեալն անում և ասում էր. «Յետի բաները մոռացել եմ, առաջիններին եմ ձգտում»։

Այս բանն Առաքեալն ասում էր՝ ամեն գործքերով գերազանցելուց յետոյ, համարձակ Դամասկոսի ժողովրդանոցը մտնելուց և Յիսուս Քրիստոսին հրապարակաւ քարոզելուց յետոյ, որ յայտնի կտտաման էր լինելու, եթէ քաղաքի պարսպից չէր իջեցրած և փախած։

Արարիայում շատ ժողովուրդներ լուսաւորելուց յետոյ՝ Անտիոքում և Տարսոսում մեծ բազմութիւն դարձնելուց յետոյ, Փոքր Ասիա շատ անգամ շրջելուց, բոլոր Յունաց տունը և Եւրոպիոյ մեծագոյն մասը անհամար ժողովուրդների բազմ

մութիւնը լուսաւորելուց յետոյ։ Անհամար հալածանք կրելուց յետոյ։ Շատ անգամ քարկոծ լինելուց յետոյ, որոնց մէկի մէջ կիսամահ եղաւ։ Շատ անգամ ձեռնաւոր և բանտարկուած լինելուց յետոյ։ Մինչև երրորդ հրկինքը յափըշտակուելուց և շատ հրաշքներ գործելուց յետոյ։

Արդ՝ այսքան գործելուց յետոյ, նորան այնպէս էր թվում որպէս թէ Յիսուսի սիրոյն ոչինչ չէ գործել, բոլորը մոռացած՝ մնում էր այնպէս՝ որպէս թէ իւր դարձի առաջի օրն է՝ որ սկսելու է նոր մտնել հրապարակ գործելու համար։

Յիսուսի խօսքին համաձայն, այնչափ ծառայութիւններից յետոյ՝ համարում էր իրան անպիտան ծառայ. «Երբոր ձեզ՝ բոլոր հրամայուած բաները անէք, ասացէ՛ք, անպիտան ծառաներ ենք, այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու։ Դուկ. Ժէ. 10»։ Եթէ մէկը համեմատէ իւր վիշտը, նախանձը, քարոզութիւնը, և իւր սէրը վշտերի, քարոզութեան և Առաքեալի սիրոյ հետ, իրան այնպէս կգտնէ՝ որպէս թէ դեռ բարին չէ սկսել. ուստի Իրոնեպոս Կարթուսեանի պէս ասենք. «Մեր անցեալ կեանքի արդիւնքովը չպարճենանք, և նորան չհամարենք մի որ և է բան, այլ միշտ այնպէս եռացած հոգով նոր ի նոր գործենք, որպէս թէ այն օրն սկսել ենք գործելու, և այն օրն մեռնելու»։

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Յաւիտենականութիւնը անփոփոխ է

Հնէրը մեզ առաւելելով և օրինակներով յայտնեցին, թէ յաւիտենականութիւնը անփոփոխ է. Եսային Աթոռի ձևով նկարագրեց, տեսնելով Տիրոջ բարձր և վերացած Աթոռի վերայ նստած, սորանով ցոյց տուաւ յաւիտենականութեան մեծութիւնը, Դանիէլը յաւիտենական Աստուծին կոչեց «Հին աւուրց», որովհետեւ տեսաւ նորա մաղբը շատ սպիտակ և Աթոռի վերայ նստած։ Եւ այս մտքով Ափրիկէի

մի ժողովրդեան սովորութիւն եղաւ, երբոր նորանցից մէկը մեռնելու էր՝ նորան դնում էին Աթոռի վերայ, որ նստելով հողին աւանդէ. և մարմնի այս ձևովը ցոյց էին տալի նորահողայ յաւիտենականութեան մէջ մտնելը: Այլ և մեռածներին այս մտքով գերեզմանումը նստած էին դնում, որով ցոյց էին տալի, թէ այս կեանքի մէջ արժան չէ խնդրել հանգիստ, այլ միայն մահից յետոյ յաւիտենականութեան մէջ: Արդ՝ այս կեանքը չէ տուած մեզ հանգիստ վայելելու համար, և մենք չենք հաստատուած նորա համար, որովհետեւ նորա ցաւերը և նեղութիւնները՝ մեզ ցոյց են տալի, թէ Աստուած նորան չարաւ՝ որ մեր սէրը և մեր փափազը գնենք նորա վերայ, այլ թէ այս կեանքը մեզ փոխ և կամ աւանդ է տուել, ուստի մեզ չէ հարկաւոր կաշիլ նորան, այլ հարկաւոր է շտապել դէպի յաւիտենականութեան լեռան: Այս կեանքը՝ որ լիքն է այսչափ թշուառութիւններով, ինքն իրան ցոյց է տալի, որ կայ մի ուրիշ կեանք՝ որտեղ զանաւոր ենք յաւիտենական հանգիստը. որն իդուր տեղը այստեղ որոնում ենք:

Երկնքումը՝ մեր բոլոր թշուառութիւններն կվերջանան և կդադարին: Այնտեղ կսրբուին արտասուքները՝ այս արտասուալի կեանքի, այնտեղ կմխիթարուինք մեր կրած ցաւերից և նեղութիւններից. այնտեղ կգտնենք մեր յաւիտենական հանգիստը:

Ոմանք յաւիտենականութիւնը օձերի ձևով ցոյց տուն, նորա անփոփոխութիւնը ցոյց տալու համար, օձերը չունին ստաների ծայր, այսպէս յաւիտենականութիւնն անվերջ է: Օձերը թէև չունին ստաներ, ձեռքեր, թև ու թիփ, սակայն այնպէս թեթև ու արագ շարժում են, մինչև գերազանցում են այն բոլոր կենդանիներից՝ որոնք ունին ձեռք ու ոտք, այսպէս է և յաւիտենականութիւնը, որովհետև չունի ցերեկ և ոչ գիշեր և ոչ յաջորդութիւն օրերի՝ ինչպէս ունի այս կեանքը: Օձերն ունին այնքան երկար կեանք, որ եթէ չսպանեն՝ գրեթէ չեն մեռնիլ, այլ օձերն ուրիշ կենդանեաց նման չեն փոխվում երիտասարդութիւնից ծերութիւն կամ

առողջութիւնից հիւանդութիւն, այլ միշտ պահում են իւրեանց հասակի փափկութիւնը՝ միշտ իւրեանց հին՝ խորխոր փոխելով: Դարձեալ օձերը չունին իւրեանց աճմանը որոշեալ չափ, այլ միշտ աճում են և զօրանում. ինչպէս միւս կենդանիներն ունին: Այսպէս և յաւիտենականութիւնը ոչ չափ ունի, ոչ մէջ, ոչ շրջան և ոչ որ և է փոփոխութիւն:

Յաւիտենականութեան այս պարագան շատ սոսկալի է դատապարտելոց համար, միշտ մնալ միևնոյն տանջանքի մէջ, առանց ունենալու որ և է սփոփումն՝ փոխուելով մի տանջանքից միւս տանջանքի: Տանջանքի փոխելը՝ միևնոյն հաւասար տանջանքի հետ, սա էլ մի կերպ հանգստութիւն է, իսկ դատապարտեալները հանգստութեան այս տեսակն էլ չեն ունենալու, որ շատ սոսկալի և դարհուրելի է, որովհետեւ այն մարդը՝ որ աշխարհի սկզբից դատապարտուել է դժոխքումը տանջանքի, այն օրից մինչև այսօր, որ անցել է գրեթէ եօթը հազար տարի, այնտեղ կմնայ, չունենալով որ և է փոփոխութեամբ՝ մի փոքր ինչ մխիթարութիւն:

Բայց դու տես, այն օրից մինչև այսօր աշխարհիս մէջ՝ որչափ անհամար փոփոխութիւններ են եղել, աշխարհըս մի ժամանակ ապականուելու համար ջրհեղեղով ջնջուեցաւ, ութն հողին միայն կենդանի մնացին: Յետոյ եկան մեծամեծ փոփոխութիւններ և կործանումներ. առաջին անգամ՝ ամեն մէկն իւր ուղածին պէս՝ ազատ էր ապրում. յետոյ վեր կացան առաջին անգամ բռնակալներ Ասորեստանից, և քաջութեամբ ձեռք բերին աշխարհի միահեծան տէրութիւնը. կայսերութիւնը 36 ինքնակալներից՝ մօտաւորապէս 1240 տարիից յետոյ՝ անցաւ աշխարհի մի ուրիշ կողմը՝ Մարաց և Պարթևաց, որոնք գրեթէ ամբողջ Ասիան տակն ու վերա արին:

Կայսերութիւնը 300 տարիից յետոյ անցաւ Պարսիկներին՝ և նորանցից Յոյներին, այս ժամանակ աշխարհս կրկին տակն ու վերայ եղաւ:

Նորանցից անցաւ Հռոմէացիներին, այս ժամանակ անցեալից աւելի մեծ փոփոխութիւն եղաւ, բայց այս ինք-

նակալութիւնն էլ նորանց նման ունեցաւ իւր վախճանը: Եւ այսքան փոփոխութեանց մէջ՝ այն ողորմելի դատապարտեալն իւր վերայ չտեսաւ որ և է փոփոխութիւն:

Դարձեալ քննենք ու տեսնենք, ինչ կտեսնենք. կտեսնենք որ աշխարհս, չմնաց փոփոխութիւն՝ որ չկրեց. կամ բնութիւնը այսքան դարերի շրջաններում: Մի ժամանակ կղզիները ընկան ու կորան ծովի ջրերի մէջ. Պղատոնն ասում է. այն կղզիներից մէկը Ափրիկայից և Եւոպայից աւելի մեծ էր, և քանիքն էլ ծովերի մէջ նորից երևեցան:

Իսկ գետնաշարժութիւնը՝ էլ ո՞ր բնակութիւն, կամ ո՞ր քաղաք կամ ո՞ր շէնք կամ ո՞ր լեռներ, ո՞ր բարձունքը և կամ ո՞ր բլուրները թողին հաստատ, անփոփոխ և կանգուն: Քանի՞ քաղաքներ գետինն անցնելով կորան, քանի՞ գետերի վտակներ ցամաքեցան, և զանազան ճանապարհներով աջ ու ձախ խոտորուեցան, ո՞ր բարձր շինուածները կացին մնացին անկործան, ո՞ր ամուր պարիսպները և ամրոցները մնացին հաստատ և անքակտելի, ո՞ր յիշատակները մնացին անկորուստ, քանի՞ կերպ կերպ օրինակներով փոփոխեցան աշխարհիս հրաշալի կարծուածները, քանի՞ անգամ տարին պտուտելով կատարեց իւր շրջանը, քանի՞ գարուններ և ամառներ, գիշերներ և ցերեկներ իրար յետևեցին, իսկ այն ողորմելի դատապարտեալը կայ և մնում է մութը ու խաւար այն գիշերի մէջ, ինչպէս առաջի օրը՝ որ ներս մտաւ, և որ օրից նա գտնւում է տանջանքի մէջ, արեգակը շրջան է կատարել աշխարհիս վերայ 220 բիւր անգամ, իսկ այն ողորմելուն չտուաւ անել զոնէ մի քայլ յետ և կամ առաջ այնտեղ՝ ուր առաջի անգամն ընկաւ:

Դարձեալ՝ տառապանաց ինչ վշտեր, ինչ ցաւեր, ինչ սոսկալի տաղնապներ ասես, որ մինչև օրս չկրեցին աշխարհիս մէջ անթիւ ու անհամար մարդիկ, այն բոլորն էլ անցան ու գնացին. իսկ այն ողորմելու տանջանքներից 7000 տարիներ իս մէջ՝ և ոչ մէկն անգամ անցաւ:

Մի ժամանակ Հռաթաթացիքները սղոցեցան: Շատ մարդկանց կենդանի զրին աղիւսների հնոցումը և այրեցին:

Շատերի կիսիցը կտրելով՝ մեռցրին: Պերիդոսին պղնձէ ցուլի մէջ խորովեցին: Յորին որդնալից վէրքերը չարաչար ասնջիցին, Տօբիթին՝ աչքերի կուրութիւնը, Գրիգոր Լուսաւորչին սոսկալի չարչարանքները և 14 տարի մութը վիրապում դառնաշունչ օձերի մէջ բնակութիւնը, սակայն այն բոլոր ցաւերն էլ տանջանքներն էլ անցան ու գնացին, իսկ այն ողորմելու տառապանքների վշտերն ու ցաւերը չանցան, մանաւանդ թէ՛ դեռ նոր են սկիզբն արել, դեռ հարիւր հազար միլիօն տարիներումն էլ այնպէս կլինին՝ ոչ աւել և ոչ պակաս, ինչպէս առաջին օրն էին:

Արդ՝ ինչ յուսահատութիւն չի պաշարել նորան՝ երբ տեսնէ աշխարհիս ամեն բաների փոփոխութիւնը ու անցողութիւնը, իսկ իւր տանջանքներից և ոչ մէկը: Աշխարհիս ուրախութիւնները՝ եթէ չփոխուէին, նորանք տանջանք կլինէին և ոչ ուրախութիւն, հապա ինչպէս տանել կլինին պատիժների այն տանջանքը, որոնք բնաւ չեն փոփոխիլ: Ի՞նչ կատաղութիւն չի պաշարել այն ողորմելուն, երբ կտեսնէ առաքինի ու սուրբ մարդկանց բոլոր տանջանքներն անցած և յաւիտենական երջանկութեան ու մխիթարութեան մէջ փոխուած: Իսկ իւր տանջանքներն ոչ անցնում են ոչ փոփոխվում և ոչ էլ յոյս ունին դադարելու: Սա է, որ նորա սիրտը սրտացաւութիւնից կպատուեցնէ, սա է, որ նորան կտայ տեսցնել՝ թէ այնտեղից ազատուելու ճար ու հնար չկայ, որ իւր ժամանակին շատ դիւրին էր:

Սորտակաճաշ մեծատունն՝ այնտեղ կտեսնէ, որ իւր սեղանի փշրանքներով կարող էր ստանալ յաւիտենական խնդութիւնը. իսկ այն ժամանակ՝ զրկուելն անգամ ջրի մի կաթիլից:

Ուրեմն քրիստոնեայն թող այժմ բանայ իւր աչքերը՝ որ կարող է նորան դնել դեղ ու դարման, որ այնուհետեւ էլ չի կարող՝ երբ կամենայ: Այժմ ընդունելի ժամանակն է:

Այժմ փրկութեան ժամանակն է, այժմ քաւութեան ժամանակն է, այժմ մի բռնուելու կարող է ստանալ այն՝ որին

չկայ ճար ու հնար յաւիտենականութեան մէջ: Այժմ ներդրութեան Յորեկանն է:

Արդեօք, Բարեւոյնեան հնոցի բոցն՝ որ բարձրանում էր 49՝ կանգուն և ոչ 50. Բնչ էր նշանակում, որ Ս. Գիրքը այնքան ճշտութեամբ յիշում է, ահա նորա խորհուրդը, 50 թիւը՝ թողութեան Յորեկանի թիւն էր՝ որ ցոյց էր տալի ներումն և թողութիւն: Ողորմելի դատապարտուածի հնոցի բոցը՝ այս կեանքի տանջանքներից՝ որքան էլ սաստկանան և որքան էլ բարձրանան, դարձեալ չեն կարող Յորեկանի թողութիւնը գտնել և տանջանքների թուլացումը տեսնել, թէ և տեէ միլիօնաւոր դարեր: Ափսոս, հազար ափսոս, մի դատապարտուած միլիօնաւոր տարիներ յանձն կառնէր ուրախութեամբ կրել ամենադառն տանջանքները, եթէ կարողանար ձեռք բերել այս կեանքի մի բոլէն՝ որի մէջ դրանէր ներումն և վերջ տանջանքներին, թանկագին բոլէներ՝ որ յարգը չիմանալով՝ զուր ի զուր կորցնում ենք, և չենք էլ յիշում թէ ինչէր ենք կորցնում, ինչէրի ենք դատապարտվում:

Այս կեանքի բոլէներն այնքան արժեն՝ որքան արժէ Աստուած, որովհետեւ նորանցով կարող ենք ստանալ Աստուածին, ուրեմն թող զուր տեղը՝ մի այսպիսի մեծագին գանձ չկորցնենք, այլ աշխատենք սորանով ստանալ յաւիտենականութիւնը և նոյն իսկ յաւիտենականութեանը Տէր՝ Աստուածին: Յիմար աշխարհասէրներն ասում են, այժմ վայելենք աշխարհիս բարութիւնները. իսկ իմաստուն առաքիներն ասում են ըստ է այժմ թողնել այս վայելները՝ որ վայելենք անանցանելի բարութիւնները յաւիտենականութեան մէջ: Աշխարհասէրներն ասում են այժմ հեշտութեամբ և հանգստութեամբ ապրենք, իսկ Բրիստոսի ծառաներն ասում են, այժմ ըստ մարմնոյ թող մեռնինք, որ յաւիտեան ապրինք:

Աշխարհասէրներն ասում են, այժմ աշխարհիս ամեն տեսակ ուրախութիւնները վայելենք, Բնչ մեր հոգան է այն կեանքը, Աստուածասէրներն ասում են, այս կեանքն անցա-

ւոր է, անցաւոր են և նորա վայելքներն, աշխատենք և անդադար աշխատենք ձեռք բերել յաւիտենականը, որի փառքն էլ և անպատմելի վայելքն էլ յաւիտենական են և անանցանելի:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Յաւիտենականութիւնը անհամեմատելի է

Ինչպէս որ հունաւորի (հուն. անցք և կամ չափ) և անհունի մէջ չկայ համեմատութիւն, այնպէս էլ ժամանակաւորի և յաւիտենականի մէջ: Ուստի՝ ինչպէս որ Աստուծոյ մեծութեան առաջ՝ հաւասարապէս աւաղի հատը և Մասիս լեռը ոչինչ են, այսպէս էլ յաւիտենականութեան առաջ 1000 տարին այնպէս է, ինչպէս աչքի մի անգամ թերթիլը: Դաւիթ Մարգարէն, երբոր սկսեց մտածել անցած ժամանակը, որ օրից աշխարհն ստեղծուել էր, այն դարերի շրջանը մինչև իւր ժամանակը, անուանեց օրեր, ասելով. «Մտածեցի առաջի օրերը». և դարձանք չէ որ այսպէս անուանեց, որովհետեւ մի ուրիշ տեղում, ասաց. «Հազար տարին Տիրոջ աչքումն, ինչպէս երեկուայ օրն, որ անցաւ»: Ի՞նչ օգուտ էր Կայենին, եթէ մինչև օրս ապրէր, աշխարհիս բոլոր երջանկութիւնը վայելէր, և այս իսկ բոլէին մեռնէր, Բնչ օգուտ էր մի օգուտ, միայն ստոյգը այն մնաց, որ Արէլ եղբօրն սպանեց. և այս սպանութիւնից Բնչ օգուտ տեսաւ, ոչինչ՝ միայն յոյս, որ յաւիտեանս յաւիտենից վճարում է իւր պատիժների պարտքը՝ յաւիտենական խաւարի մէջ: Իմաստունն ասում է. «Մի ժամուայ նեղութիւնը, մեծամեծ վափկութիւնները մոռացութեան է տալի»: Սիրաք ժա. 29:

Արդ՝ եթէ մի ժամուայ նեղութեամբ շատ տարիների հեշտութիւնները մոռուած են լինում, ուրեմն քո վայրկեանական հեշտութիւններն Բնչպէս չեն չքանալ, որ քեզ դահավէժ արին յաւիտենական տանջանքի մէջ. եթէ մարմնի վայրկեանական մահը՝ մարդուն մերկացնում է նորա բոլոր

հեշտութիւններից, ուրեմն ի՞նչ է անելու հոգւոյ յաւիտեանական մահը: Անտիոքոս երեւելին, այն ժամուն՝ երբ հոգին աւանդեց, ի՞նչ ֆնաց նորան, նորա այնքան արարմունքներից ոչինչ, միայն յաւիտեան տանջանքների վերայ՝ տանջանք. ցաւերի վերայ՝ ցաւեր, պատիժների վերայ՝ պատիժներ, թշուառութեանց վերայ՝ թշուառութիւններ, և որ ամենից սոսկալին է, այնտեղ կմնայ՝ որքան որ Աստուածն Աստուած է:

Մարդիկներն աշխարհից դուրս գալուց յետոյ՝ բոլորն էլ ի բար հաւատար են, նա՛ որ շատ ապրեցաւ, նա՛ որ քիչ ապրեցաւ, նա՛ որ տեսաւ շատ վայելմունք, նա՛ որ տեսաւ քեզ, նա՛ որ օրերն հեշտութեանց և փափկութեանց մէջ անցրեց, և նա՛ որ չարչարանքների և ամանջանքների: Որովհետեւ բոլորը անցաւ վերջացաւ, ոչ մէկն էլ այժմ չի գտնուիլ ուրախութիւնները, և ոչ միսը իւր կրած ցաւերը ու տանջանքները:

Արդ, քրիստոնայն թող քննէ, թէ ի՞նչ ընտրէ, որովհետեւ միապէս վերջանում են՝ փափկասիրութեան ուրախութիւններ՝ որոնցով մեղանշում է, և մարդասիրական բարեգործութիւններն՝ որոնցով իւր մեղաց պարտքը հատուցանում է. և նոյն օրինակ՝ միապէս ֆնում են, անվախճան տանջանքները՝ որոնց մեղքերով արժանի գտնուեցին, և զմայելի ուրախութիւնն՝ որոնց մարդասիրական բարեգործութեամբ շահեցան, ուրեմն թող ընտրէ իւր բարին ու օգուտն: Թող տեսնէ, թէ իրան ո՞րքան բարի է թեթեւ բարեգործութիւններով և վայրկեանական նեղութիւններով շահել յաւիտեանական փառքի մեծութիւնը. եթէ իւր կրած նեղութիւններն տեւելու էլ լինին հարիւր տարի, այնուամենայնիւ յաւիտեանականութեան առաջ մի վայրկեան են: Եւ այս պատճառաւ, ոչ ոք չնեղանայ և ոչ ոք չյուսահատուի իւր կրած նեղութիւնների վերայ՝ որ երկար տեւում են, յաւիտեանականութեան առաջ չկայ ոչ մի երկար բան. ս. Օգոստինոսի ասածին համաձայն թէ «Ամեն բան՝ որ վերջ ունի, քիչ է և կարճատեւ»: Հազար տարին վերջ ունի, հարիւր հա-

զար տարին էլ վերջ ունի, միլիօն և միլիարդներն էլ վերջ ունին, այսքան տարի ժամանակներն՝ որոնք իւրեանց երկարութիւններով երեւում են սոսկալի, այնուամենայնիւ յաւիտեանականութեան առաջ մի վայրկեան են: Եթէ երկիրս համեմատէինք երկնից առաջ, երկիրս՝ մի աննշմարելի կէտ կերէր, ուրեմն զարմանք չէ՝ որ այնքան միլիօնաւոր տարիները մի վայրկեան երեւին յաւիտեանականութեան առաջ:

Ո՞վ մարդկային կուրութեան, որ այս ժամանակը մի մեծ բան համարելով՝ մեծ ջանքով աշխատում են վայելել այս կեանքում հեշտութիւններ. ընկերի մահովը՝ քաջութեան անուն, աշխատաւորի քրտինքովը՝ հարստութիւն, և մահուան մէջ՝ պարծանքի յիշատակ:

Եւ այս ամենը՝ որի՞ համար, մի ըոպէի համար, մի վայրկեան ժամանակի համար:

Արդ՝ եթէ Աստուած քեզ տալ կեանք՝ միայն մի ժամ, և դու հաստատ իմանայիր՝ որ քո մահից մի ժամ յետոյ աշխարհս վերջանալու է, արդեօք՝ կըկորցնէիր այն փոքրիկ ժամանակը՝ հոգալու, մահիցդ յետոյ ստանալ համբաւ՝ արդարեւ ոչ: Սակայն ո՞ր թողնենք այն բանը՝ որ Յովհաննէս Աւետարանիչն ասում էր, թէ աշխարհիս վերջը մօտեցել է, թէ և տեւելու էր շատ տարիներ, որովհետեւ այս բոլոր տարիները՝ համեմատելով յաւիտեանականութեան հետ՝ միայն մի ժամ են:

Եւ ինչպէս որ չէիր մտածել՝ բացի անդադար բարեգործութիւնից, թողնել աշխարհիս մէջ ունայն փառքի յիշատակ, երբ աշխարհի վերջանալուն ֆնար միայն մի ժամ, այնպէս էլ այժմ՝ չպէտք է խորհիս այդ բանը՝ թէ և գիտես՝ որ աշխարհս տեւելու է շատ շրջանների դարեր:

Եթէ հաստատ իմանայիր, որ հարիւր տարի ապրելու էս, և այդքան միջոցումը քո ապրուստի համար՝ միայն մի ժամում ունենալու էիր օգտուիլ, և ոչ ուրիշ որ և է ժամերում, դու հանգիստ կմնայի՞ր, այն ժամը՝ դատարկ անցներ:

Եթէ մի մեծ թագաւոր՝ հրամայէր քեզ, որ միայն այս ինչ ժամում, գանձարանից հանես քեզ համար ոսկիներ՝ որ-

քան կամենաս. արդեօք դու այն թանկագին ժամը կըկորցնէիր դատարկութեամբ, կամ կպարապէիր ցնդաբաններին հետ ճառախօսութեամբ. դատարկապորտների հետ՝ շուայլութեամբ, անառակների հետ՝ զեղխութեամբ, արգարև չէիր անել այդ բանը, այլ առանց մի բոպէ կորցնելու կաշխատէիր դանձիցը դուրս կրելով օգտուելը: Տես, և ուշադրութեամբ քննիր, թէ դու զո՞ւ հրճափ անհոգ ես քո հոգևոր օգուտի մէջ, որովհետև հաստատ դիտես, որ յաւիտենականութեան մէջ՝ ուր անմահ մնալու է քո հոգին, այնտեղ չես ունենալու ուրիշ որ և է մի բան՝ բացի նորանցից, որ այս կեանքումը բարեգործութեամբ շահուեցար:

Ուրեմն տես և մտածիր այս փոքր ու կարճ ժամանակը՝ որ քեզ տուաւ հոգալու յաւիտենական կեանքի համար. իսկ դու անհոգ անցնում ես այս թանկագին ժամը զբօսնելու, խաղերի, կատակների, ծիծաղների, ուտելու, աւերելու, և հեշտութիւնների մէջ: Տես իմաստուններն ի՞նչ են ասում. «Յաւիտենական հանգստի համար՝ արժան է յանձն առնել մշտնջենաւոր աշխատութիւն, և անվերջանալի երջանկութիւնը ստանալու համար՝ պէտք է յանձն առնել մեծ նեղութիւն և աշխատանք, Օգոստինոս»: Իսկ Սողոմոնը յաւիտենականութեան համար ասում է. «Երկար օրեր, աջ կողմը կեանքի տարիներ, և ձախ կողմը՝ փառք ու մեծութիւն»: Եւ ինչպէս որ աջ ձեռքը՝ ուժեղ է, իսկ ձախը՝ թույլ, այսպէս յաւիտենականութեան համար՝ պէտք է մեր բոլոր ուժը գործ դնենք և ոչ ժամանակաւորի համար, որովհետև մեզ ի՞նչ օգուտ աշխարհիս փառքերն և մեծամեծ պատիւները, երբ մշտնջենաւոր չեն, այլ վաղանցուկ:

ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ժամանակ եւ կեանք

Արիստոտէլն ասում է. «Ժամանակը՝ շարժման չափն է, որովհետև որտեղ չկայ շարժումն և յաջորդութիւն, այն-

տեղ չկայ և ժամանակ»: Սակախաղոսն աւելացնում է թէ. «Ժամանակը արևի երազընթացութեան չափն է»: Պրոկղն ասում է. «Ժամանակը երկնային մարմինների ընթացքի և հորովմանց (պտոյտների) թիւն է»: Մեծն Ալեքսանդրոսն ասում է. «Ժամանակն առաջի շարժունի՝ շարժման չափն է»:

Արդ՝ տես, թէ կարելի է յոյս դնել մարդուս կեանքի վերայ, որովհետև մասն է՝ մի այնպիսի անհաստատ, թույլ, և սրընթաց բանի՝ որ անցնում է և վազում արևի հետ հաւասար, և հաստատութեան աստղերի՝ որոնք վազելու ընթացքում չէ՛ թէ միայն արագաթուփ թռչուններից աւելի անցնելով անցնում են՝ այլև սրընթաց քամիներից: Կաքաւից աւելի շուտ՝ հասնում է յափշտակող բաղէն, բաղէից աւելի շուտ՝ որսորդի գնդակը դիպչում որսին. իսկ գնդակից աւելի շուտ՝ ամպերից արձակուած շանթը: Բայց այս համեմատութիւններն ի՞նչ են սրընթաց վազող մահի և ժամանակի առաջ, որովհետև ժամանակը երկնքի հաստատութեան հետ զուգընթաց թռչում է, որի սրընթացութիւնն այնչափ սաստիկ է, որ մի ժամուայ ընթացքում վազում է 420 բիւր մղոնից աւելի:

Ուրեմն ի՞նչպէս չես վախենում մահիցը, որ այսպէս ընթացքով վազում է դէպի քեզ: Աղեղն քո դէմ արդէն լաւել է՝ նետը ձգում է դէպի քեզ, իսկ դու նետի դիմացը անհոգ կանգնած ես, ոչ գլուխդ ես խոնարհեցնում, ոչ մէկ կողմն ես թեքվում՝ և ոչ իսկ ճանաչում ես քեզ: Եթէ տեսնէիր՝ որ ուռմբն արձակուեցաւ դէպի քեզ, դու իսկոյն ուշաթափ կընկնէիր գետին. իմացիր, որ մահը ուռմբից՝ աւելի շուտ է հասնելու քեզ, որ մի քառորդ ժամումը հարիւր հազար մղոն կտրելով վազում է դէպի քեզ, իսկ դու չես գիտում՝ թէ երբ և թր բոպէին հասնելու է քեզ, այս պատճառաւ, պէտք է ամեն բոպէ քեզ պատրաստ պահես, որովհետև մահը ամեն բոպէ աչքը դէպի քեզ ուղղած գալիս է: Ժամանակի բացի արագընթացութիւնից՝ պէտք է նկատել նորա հանգամանքները, ըստ Արիստոտէլի, ժամանակը շարժման չափն է, որովհետև բաղադրուած է յաջորդական

մասերից: Նա չէ կարող տալ միանուագ լինելութիւն, այլ յաջորդաբար՝ իրար յետեւից, ուստի երկրորդներն չեն կարող լինիլ՝ քանի որ չեն անցել առաջինները: Մանկութեան բարիքն ու զուարճութիւններն բաց են թողնվում, երբ դալիս են երիտասարդութեան բարիքը, սորանք էլ բաց են թողնվում՝ երբ դալիս են ծերութեան բարիքը:

Արդ՝ դառնանք և միանգամայն նկատենք մեր անցած կեանքը, թէ ուր է մանկութիւնը, ուր է մեր պատանեկութիւնը, և ուր է մեր երիտասարդութիւնը. սորանք մեր մէջ արդէն մեռած ու չքացած են երևում, և այսպէս մարդս իւր կեանքումը շարունակ մեռնում է: Փիլիսոփան լաւ ասաց թէ «Մեզ չկայ ժամանակի որ և է վայրկեան» որի մէջ մեռնում է մեռնէինք»:

Եւ այսպէս՝ չկանք, եթէ ոչ մի վայրկեանի մէջ, որովհետեւ կեանքիցը ուրիշ ոչ մի բան չունինք, եթէ ոչ ներկայ վայրկեանս:

Անցեալ տարիներն անցան զնացին, նոցա համար արդէն մեռած ենք, ապագայ տարիների համար՝ չկանք, նոցա համար դեռ ծնելու ենք, երեկուայ օրն արդէն անցաւ չքացաւ, վաղուայ օրն անստոյգ է, իսկ այսօրուայ ժամերի մեծ մասն անցել են, որոնց համար՝ այլեւ չկանք, և որոնք էլ՝ գալու են՝ չգիտենք. եթէ կարող ենք նոցանում ապրիլ. և այս բոլորը ի միասին հաշուելով՝ կտեսնենք, թէ չկանք՝ եթէ ոչ այս իսկ վայրկեանում, որ ապրում ենք՝ վայրկեանս առ վայրկեան մեռնելով, ուստի մեր կեանքը չենք կարող կոչել մի որ և բան, եթէ ոչ վայրկեանամէջ, որ մահի և կեանքի մէջ անբաժանելի կերպիւ կիսած է երկուսի:

Եւ այս պատճառաւ այս կեանքը յիրաւի կոչվում է «Մահու ստուեր»: Ինչպէս որ մարդու քայլափոխելուն՝ քայլափոխում է և իւր ստուերը, այսպէս էլ կեանքի ամեն քայլն ունի իրա հետ մահուան քայլը: Եւ դու սորա հակառակը տես յաւիտեանականութեան մէջ, որ միշտ սկսվում է, ուստի միշտ մշտնջենաւոր սկիզբն է, իսկ այս կեանքը՝ միշտ վերջանում է, և կարելի է կոչել վերջ, և կամ ան-

ընդհատ մահ: Ի՞նչ զուարճութիւն, և ի՞նչ ուրախութիւն և կամ ի՞նչ ցաւ և ի՞նչ կսկիծ՝ կզգար մեր սիրտը, երբ մի հրաշագեղ պատանեակուհի բանար իւր բերանը և անուշաձայն երգել սկսէր և նոյն րոպէին էլ՝ մահը նորան իսկոյն գետին տապալէր, այսպէս են աշխարհիս բոլոր փառքերն ու զուարճութիւններն, որոնց մեր աչքին երևին ու չքանալը լինում են շուտ և րոպէական:

ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳՆՈՒՆ

Ժամանակի կարծութեան համար՝ կեանքի պէտքականները յարգի չեն

Մարդն՝ իւր կեանքից աւելի դիւրաբէկ և կորստական բան չունի, մարդուս կալուածները, ժառանգութիւնները, մեծութիւնները, պատիւը, համբաւը մնում են դարերի ընթացքում. բայց ոչ նորա կեանքը, որ այնչափ նուրբ ու փափուկ է, որ մինչև անգամ՝ մի փոքր ցրտութիւն, կամ աւելի տաքութիւն, կամ մի սաստիկ քամի, կամ մի հիւանդ մարդու շունչ, և կամ մի թունաւոր կաթոռած՝ բաւական է նորան ոչնչացնել և չիք դարձնել, և եթէ մի լաւ նկատենք՝ նորան ապակուցը աւելի դիւրաբէկ կգտնենք: Որովհետեւ եթէ ապակուն ձեռք չդիպչի՝ երկար տարիներ կմնայ. իսկ մեր կեանքին՝ եթէ ոչ ոք էլ ձեռք չտայ. ինքն իրան կվերջանայ և չիք կդառնայ:

Եթէ ապակին զգուշութեամբ պահուի՝ շատ դարերի ընթացքում ամբողջ կմնայ. իսկ մեր կեանքը անկորուստ պահելու համար՝ ոչ մի զգուշութիւն և հոգատարութիւն չեն օգնել: Այս ամենը լաւ իմացաւ Դաւիթը, որն եղաւ Եբրայեցոց բոլոր իշխանների մէջ՝ աւելի բաղդաւոր և զօրեղ իշխան, և թագաւոր՝ մեծ տէրութեան, որ իւր ձեռքումն ունէր երկու թագաւորութիւն՝ Յուդայի և Իորայէլի, և Ասսուրոյ՝ Իսրայէլի որդւոցը խոստացած բոլոր երկիրները, որ միայն նորա ժամանակին բոլորը ժառանգեցին, և բացի

նորանցից՝ իւր տէրութիւնը ընդարձակեց այլև շատ գաւառներում: Իսկ գանձերով և մեծութեամբ այնչափ ճոխ ու հարուստ էր՝ մինչև անգամ իւր տունն ու զօրքերը լի էին ոսկիներով, որ իւր որդի Սողոմոնին թողեց գանձերի ահագին կոյտ:

Արդ, մի այսպիսի բաղդաւոր թագաւոր մտածելով թէ իւր մեծութիւնը և կեանքը վերջանալու են, ասաց. «Ահա իմ օրերը՝ չափով նշանակեցիր, և իմ կեանքի ժամանակը՝ քո առաջ ոչինչ է. Սաղմ. 120: Այսինքն իմ բոլոր ունեցածը, իմ բոլոր թագաւորութիւնը, իմ բոլոր յաղթութիւններին հարստութիւնները, և իմ բոլոր կալուածները, որ այսպիսի ուժեղ թագաւորութեամբ ժառանգում եմ. բոլորն ոչինչ է, և բոլորիցը աւելի ոչնչագոյն իմ կեանքն է:

Այսպիսի չնչին, ունայն և անարգ համարումն ունին՝ այն բոլոր փափկութիւններն ու հարստութիւններն՝ որ մինչև անգամ եթէ նորանց վայելելու լինէինք հազարաւոր տարիներ: Սորանք բոլորն էլ՝ մեր մտածելուցն էլ աւելի շուտ վերջանալու են, միայն հարկաւոր է մեզ հոգալ թէ ինչ ենք անելու: Ո՛հ, երանի թէ, մեր կեանքի կարճութիւնը միշտ աչքի առաջ ունենայինք, այն ժամանակ ամեն տեսակ չարութիւններն, ազահութիւններն և վայելչութիւններն մեր աչքին զգուելի կերեային: Այս բանը Աստուած մեզ համար այնքան հարկաւոր համարեց, որ մարգարէների գլխաւորին հրամայեց դուրս գնա ճանապարհի վերայ և հրապարակենք ում փողի ձայնով աղաղակէ «Թէ մեր կեանքը կարճ և դիւրաբեկ է» և այսպէս երբ Նսայի մարգարէն՝ Աստուծոյ յայտնած Յիսուսի մարդեղութեան խորին խորհուրդը մարգարէանում էր՝ յանկարծ լսեց Տիրոջ ձայնը որ ասում էր «Գողջի՛ր գողջի՛ր» (ասա ասա)՝ մարգարէն պատասխանեց «Ո՛վ Տէր ինչ ես կամենում՝ որ ասեմ»: Տէրն ասաց. «Ասա, որ բոլոր մարմինը խոտ է»: Ինչպէս որ խոտը՝ երեկոյեանը ցամաքելով՝ առաւօտուն չորանում է, և ծաղիկը իսկոյն թառամում, այսպէս են բոլոր մարմինների կեանքը, որոնց

գեղեցկութիւնը, և վայելչութիւնը մի օրուայ մէջ թառամում ու անցնում են:

Արդ, ամենաբարձրեալ Աստուածը կամեցաւ, որ մարգարէիցը հրատարակուի մարդկային կեանաց բեկանորոշութիւնը և կարճութիւնը՝ խորին, գաղտնի և անբովանդակելի խորհրդի հետ խառն, այսինքն Փրկչի մարդեղութեան և աշխարհի փրկութեան եղանակի հետ, որին վեհագոյն Սեբովբէներն անգամ չէին կարողանում ճանաչել: Որովհետև խիստ շատ հարկաւոր էր մարդկանց՝ յորդորել դէպի այս ճշմարտութիւնը, որ կեանքի կարճութիւնը իմանան, որովհետև օրինակները ամեն օր աչքի առաջ ունին, և նոցա ականջներին հնչում է, դարձեալ չեն հաւատում՝ թէ նոցա կեանքը վերջանալու է, և սորա համար նոցա մէջ իբրև խորին և գաղտնի խորհուրդ է, որը չեն կարողանում հասկանալ: Այս պատճառաւ Աստուած հրամայեց, որ ինչպէս մի նոր և խիստ շատ հարկաւոր բան՝ մարգարէն նորան բարձր ձայնով մեզ հրատարակէ և դէպի նորան յորդորէ, որ այն ճշմարտութիւնը մարդկանց սրտերի մէջ թափանցէ: Ուրեմն Աստուածից լսենք այս ճշմարտութիւնը «Թէ ամեն մարմին խոտ է, կեանքի բոլոր օրերը՝ կարճ են, բոլոր ժամանակը շուտով թռչում է, բոլոր կեանքը պակասելով չքանում է, և տարիների շատութիւնը ոչինչ է»:

Արդ՝ թէ ո՞րքան ճշմարիտ է այս, կարող են նորանցից իմանալ՝ որոնք երկար ապրելով՝ տեղեակ են նորան. ուրեմն լսենք՝ թէ կեանքի համար ինչ դատաւարան են անում: Երբ դու հաստատ իմանում ես՝ որ հարիւր տարի ապրելու ես, սա քեզ մի մեծ բան է երևում և երկար կեանք, ուրեմն լսի՛ր երանելի Յօբին՝ որ 248 տարի ապրեց, և սորան քաջ դատաւոր եղաւ, թէ նորա կեանքը՝ թէ յաղորութեան և թէ ձախորդութեան մէջ ինչ եղան, արդեօք ինչ է ասում. «Ոչինչ են իմ կեանքը» Յօբ. 7—16: Ահա, իւր բերանովը քեզ խոստովանում է, թէ իւր կեանքի 248 տարիներն՝ ոչինչ էին:

Ուրիշ տեղերում էլ շատ անգամ խօսում է իւր կեանքը

քի կարճութիւնը՝ նորան նմանութեամբ և օրինակով պարզաբանելով: Որ մի տեղում ասում է. «Թէ իմ կեանքը՝ սուրհանդակից թեթեւ է»: Եւ մի ուրիշ տեղում «Թէ մարդու կեանքը ծառի ծաղիկի նման է, որ երեւելուն պէս թափվում է և ոչնչանում: Եւ սա զարմանք չէ, որովհետեւ այս դատաստանն արին և նորանք՝ որոնք ապրեցան ոչ թէ միայն 248 տարի՝ այլ 900 տարիից աւելի, որոնք ջրհեղեղից առաջ ապրում էին,

Արդ՝ լսիր նոցա ասածը, որ իմաստունը առաջ է բերում. ամբարիշտները դժոխքումը կասին. «Հապարտութիւնը մեզ ինչ օգուտ եղաւ, և ամբարտաւանութիւնների մեծութիւնը մեզ ինչ նպաստաւոր կլինի, այն բոլորը ստուերի նման անցան: Իմաս. 5. 8:

Արդ, եթէ դատապարտեալները իւրեանց ինն հարիւր ամեայ կեանքի ժամանակները անուանում են ստուեր և վճռում են, թէ նոր էին ծնել՝ երբ մեռան: Հապա դու, ինչո՞ւ ցնորուած մտածում ես երկար ապրել, որովհետեւ մեր այս ժամանակումը մեծ բան է՝ կեանքի մինչև 60 տարին: Հոմերոսն այսպիսի կարճատե կեանքը համեմատեց տերևների՝ որ տարուայ մի եղանակում հազիւ մնում են: Իսկ Պլատոնը համեմատեց հսկող պահապանների աչքերի քուն լինելուն: Մանաւանդ փիլիսոփաներից և սրբերից ոչ մէկը չկարողացաւ գտնել մի որ և է նմանութիւն և օրինակ՝ որ սորան գոհացուցիչ կերպիւ բացայայտէր, որովհետեւ ոչ սուրհանդակները և ոչ նաւարդութեանց թռիչքը և ոչ թռչունների արագընթացութիւնը կարող են նորան համեմատուիլ: Այս բանը Փելեմոնին այնչափ արագաթռիչ երևեցաւ, որ մինչև անգամ ասաց. «Այս կեանքը՝ ուրիշ մի բան չէ, եթէ ոչ՝ ծնել ու մեռնել, մանաւանդ թէ, ծնելու ժամանակ՝ դուրս ենք գալի մի ինչ որ մութը գերեզմանից, մեռնելու ժամանակ՝ մտնում ենք մի ուրիշ մութը ու ստուկալի գերեզման:

Եւ բացի սորանից, այսպիսի կարճատե կեանքի երբորդ մասը խլում է քնոյ ժամանակը, այլև հաշուի մէջ չի

առնուիլ երեսայութեան և մանկութեան ժամանակը, և ուրիշ դէպքերի ժամանակը՝ որոնք արգելք եղան կեանքի պտուղը վայելելու, ուստի հազիւ մեզ մնում է մեր կեանքի կէսը, և այս կէսն էլ՝ որ ունինք, կարելի է արդեօք ասահով համարել՝ ոչ, խաբւում ենք խաբւում. Իմաստունն ասում է. «Մարդս չգիտէ իւր կեանքի վերջը». Ինչպէս որ ձկները և թռչուններն՝ երբ իրանց հանգիստ ու ապահով են համարում, յանկարծ ուռկանի և թակարդի մէջ են բռնվում, այսպէս էլ մահը՝ յանկարծ հասնում է մարդկանց այն ժամին՝ որ բոլորովին ապահով ու հանգիստ են իրանց կարծում:

Արդ, տեսէք թէ բոլոր ժամանակաւորներն ինչպէս անարգ են, և աշխարհիս փառքերն ինչպէս բեկանուտ և անցաւոր են, որովհետեւ աշխարհիս բարիքները մեր կեանքիցը չեն գերազանցում, եթէ սա մի այսպիսի չնչին բան է՝ հապա նորանք ճիշդան՝ որոնք միայն սորա համար են պատուական:

Նարուզդունոսորի պատկերը՝ թէ և մեծամեծ հանքերից էր կազմած՝ ոսկուց և արծաթից. բայց այն ամենը հաստատուած էր խեցեղէն օղբերի վերայ, ուստի երբոր լեռնից մի փոքր քար կտրուեց և դիպաւ նորան, և նա շուտով վայր ընկաւ ու կործանեցաւ:

Ո՛վ, աշխարհիս մեծութեանցը՝ որոնց հիմքը այս բեկանուտ կեանքն է, որ պատրաստի կայ քակտուիլ ու ոչնչանալ՝ չէ՞ թէ մի քարից՝ այլ մինչև անգամ խաղողի մի հատիցը: Եւ այս առթիւ Դաւիթն յիշաւի ասաց. «Թէ ամեն մարդ ունայն է՝ քանի որ այս կեանքումն է»: Որովհետեւ մարդկանց կեանքի շատ կարճութիւնը՝ բոլոր բարիքը անում է անարգ ու փուռ: Ունայն են (անարգ, փուռ,) պատիւներն, ունայն են մեծութիւններն, ունայն են փափկութիւններն, ունայն են կեանքիս բոլոր գեղեցկութիւններն ու վայելմունքները. որովհետեւ նոյն իսկ կեանք էլ ամբողջապէս ունայն ու բեկանուտ է:

Գուերկիոս Գոմինիկեանը, որն առաջ փիլիսոփայ և բժիշկ էր, յետոյ եղաւ քաջ Ոստուածաբան, երբոր լսեց Ս. Դրբի՝ ծննդոց հինգերորդ ընթերցումը. որտեղ մարդկանց Ազամից իջած ազգաբնակութիւնը պատմում է այսպէս. «Ազամն ապրեց 930 տարի ու մեռաւ. Սեթն ապրեց 912 տարի ու մեռաւ. Ենոսն ապրեց 905 տարի ու մեռաւ. Կայնան ապրեց 910 տարի ու մեռաւ. Մադաղէէլն ապրեց 895 տարի ու մեռաւ. Յարեդն ապրեց 962 տարի ու մեռաւ. Մաթուսաղան ապրեց 969 տարի ու մեռաւ և այլն: Սկսաւ

հաշուել իւր կեանքի տարիքն ու ասել. «Եթէ այսքան մարդեր կ'ըլլէ՝ այսքան երկար տարիներ ապրելուց յետոյ մեռան, ուրեմն ինձ չէ հարկաւոր աշխարհիս մէջ այս կարճ ժամանակս գուր տեղը կորցնել, այլ աշխատիմ իմ կեանքը դնել մի ահապիսի ապահով վիճակի մէջ՝ որ չկորչի, երբոր մեռնի: Այսպիսի մտածութեամբ սկսաւ գնալ մի այնպիսի ճանապարհաւ՝ որ թշ միայն իրան միայնակ, այլ իւր շրջապատելոցն և շատ շատերի յաւիտենական երջանկութեանը գտնելու պատճառ դարձաւ:

Արդ՝ ամեն բան փոքր է, որ ունի վերջ, որովհետեւ բոլորն էլ դիմում են դէպի ապականութիւն. ուրեմն ինչո՞ւ քչի համար՝ կորցնենք շատը, այժմ քիչ զուարճութիւններից հրաժարուինք՝ որ յաւիտենական զուարճութիւններից չզրկուինք: այժմ քիչ ցաւերի և քիչ նեղութիւնների համբերենք, որ յաւիտենական տանջանքներիցն ազատուինք: Օգոստինոսն իրաւամբ ասաց. «Լաւ է այժմ կոկորդոմս փոքր ինչ դառնութիւն, քան մշտնջենական տանջանք ներսը փորոտիքումս»: Ամեն բան՝ որ ժամանակի հետ անցնում է, մեր Փրկիչը փոքր կոչեց: Այսպէս փոքր կոչեց իւր չարաբանաց ժամանակը, թէև կրած տանջանքները խստագոյն էին. փոքր կոչեց Առաքելոց նահատակութեան ժամանակը, թէև խիստ և շատ մեծ էին: Արդարեւ փոքր է, այս կեանքումը մեր կրածները և գրեթէ ոչինչ՝ համեմատելով անվախճան տարիների հետ:

Օգոստինոսն ասում է. «Այս կարճ կեանքը՝ մեզ երկար է երևում, որովհետեւ դեռ նորան անցնում ենք, բայց երբոր վերջանայ՝ այն ժամանակ կ'իմանանք՝ թէ որքան կարճ էր:

Արդ՝ այնպէս համարենք, որպէս թէ հասել ենք մեր կեանքի վերջին բոլէին, յիշաւի այն ժամանակ մեր աչքին մեծ երևեցած բաները՝ համեմատելով մշտնջենաւորի հետ՝ կ'տեսնենք որ բոլորը ոչինչ է:

Բեռնարգոսը մեծ իմաստութեամբ Ս. Հերոնիմոսի բանը կրկնելով ասում էր. «Ոչ մի ցաւ՝ չպէտք է երևի մեզ խիստ, ոչ մի տանջանք՝ երկար, եթէ նորանցով կարող ենք օգտուիլ յաւիտենական փառքը: Յակովբին քիչ էին երևում այն եօթը տարիները՝ որոնց մէջ ծաւայեց Լաբանին՝ Հոաքելի սիրոյ համար, իսկ մեզ մի փոքր ժամանակը՝ որ գործ ենք դնում Տէրոջը ծառայելուն՝ երկար է երևում: Տես թէ մենք թւում ենք ծառայում և ինչո՞ւ համար, և տես թէ Յակովբն ի՞նչ էր ծառայում և ինչո՞ւ համար: Մենք ծառայում ենք

ճշմարիտ Աստուծուն՝ յաւիտենական փառքի համար. իսկ նա ծառայում էր մի խաբերայ կռապաշտի՝ անցաւոր դեղեցկութեան համար: Արդ, մեր ծառայութիւնը համեմատենք Յակովբի ծառայութեան հետ՝ տեսնենք թէ՛ կ'ան քսան տարի, որ Աստուծուն ծառայում ենք այնպէս՝ ինչպէս որ նա ծառայեց Լաբանին. տեսնենք, թէ կարող ենք ճշմարտութեամբ ասել այն՝ ինչ որ Յակովբն ասաց. «Յերեկը տաքութիւնիցն այրվում էի, գիշերը ցրտիցը, քունը աչքերիցս կտրուել էր: Ծննդ. 31. 40»:

Եթէ նա, որ Աստուծոյ ծառան էր, այսպիսի հաւատարմութեամբ ծառայեց մի հեթանոսի. ուրեմն ի՞նչ և ինչպէս հաւատարմութիւն հարկաւոր է մեզ ունենալ դէպի մեր Աստուածը՝ եթէ ախորժում ենք լինել նորան ծառայ: Ամեն բան պէտք է մեզ փոքր երևի, որովհետեւ ծառայում ենք ամենամեծ Աստուծուն՝ ամենամեծ վարձքի համար:

ՏՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒՆ

Ժամանակը ի՞նչպէս է լինում՝ յաւիտենական կեանքի պատմաւ

Ժամանակը թէև կարճ ու փախչող է՝ բայց կարող է անմահական կեանքի պատճառ լինիլ, որովհետեւ կարող ենք այս կարճ ժամանակում նորան ստանալ և յաւիտեան վայելիլ: Ս. Յովնանէսն ասում է. «Որ ժամանակս մօտ է», Յուդայ ընազիրն ասում է. «Որ պատճառը մօտ է», որովհետեւ այս կեանքի ժամանակը պատճառ է յաւիտենական երջանկութիւնն ստանալու: Հներն աւելի լաւ ճանաչեցին պատճառի կարևորութեան պատուականութիւնը, և ըստ այնմ չկ'ըրբին ժամանակը առանց նորանից իւրեանց յաւիտենական երջանկութիւնը ստանալու:

Եթէ թաղաւորը՝ մի ճարտար արհեստաւորի հրամայէր՝ որ շուտով վերջացնէր իրա ծրագրած հրաշակերտ շինուածքը իւր բոլոր մանրամասնութեամբը վեց ամսուայ ընթացքում՝ որ կարելի էր մի տաքուայ ընթացքում հազիւ վերջացնել, եթէ մի բոլէ անցնէր՝ կենդանի կենդանի կրի հնոցն էր ձգելու, իսկ եթէ ասած ժամանակին վերջացնէր՝ արժանացնելու էր իր բարեկամութեանը և մեծագին հարկատուութեան: Արդիւ՞ք՝ այն արհեստաւորը կուզենար անհոգ ու հանգիստ անցնէր ժամանակը, ուշ կ'դարձնէր զուարթութիւնների, խաղերի և զբօսանքների, ոչ ապաքէն լարուած ուշադրութեամբ, անդուլ և անդադար կաշխատէր շին-

նութիւնը ժամանակին համապատասխան հասցնել իւր կատարածին, որովհետեւ հակառակ դէպքում կեանքն էր կորցնելու, և այսպէս, եթէ պատուի փառքիցը խրախուսուած չաշխատէր՝ դոնէ պատժի սարսափիցը քունն աչքերիցը փախցնելով անհանգիստ կաշխատէր գործը աւալտ հասցնելու։ Այսպէս էլ մենք, երբ այս կարճ ժամանակի մէջ, որ գտնվում ենք Աստուծոյ շնորհաց մէջ, պէտք է որ առանց մի րոպէ կորցնելու անհանգիստ աշխատենք զանազան քարեգործութեամբ կատարել մեզ վերայ դրուած պարտականութիւնները, եթէ մեր այս պարտականութիւնները կատարելու համար՝ չքաջալիրուէինք յաւիտենական փառքի երջանկ։ Եթեւ այս, գոնէ սոսկայինք յաւիտենական պատժից։ Ուրեմն ինչպէս ենք անհոգ թմրած մնում՝ երբ փրկութեան ժամանակը դեռ մեր առաջն է։

Ո՛հ ժամանակ, ժամանակ, թանկագիններից ամենաթանկագինը, Ձեռնոն ուղիղ ստում էր. «Մարդո՛ւ բացի ժամանակից՝ ոչ մի բանի կարօտ չէ, և ոչ մի բան նորան այնքան հարկաւոր է՝ որքան ժամանակը»։ Պիլիոսը՝ ժամանակն այնքան մեծ բան էր համարում, որ մինչև անգամ չէր կամենում նորա մէջ կորցնել և ոչ մի րոպէ, և այս պատճառաւ մի օր տեսնելով եղբորդուն դատարկ շրջելիս, նորան ասաց. «Կարող էիր այդ ժամանակը մի ուրիշ պէտքեւան բանի համար գործ դնել»։ Սենեքը՝ ժամանակն ամեն բանից մեծագին և պատուական համարելով՝ ասաց. «Ո՞վ է, որ կարողանայ ժամանակին զին դնել»։ Արդ՝ եթէ հեթանոսներն՝ որոնք չգիտէին ժամանակը՝ իբրև յաւիտենական կեանքի գին, նորան այսքան մեծ և պատուական էին համարում, որչափ մենք քրիստոնեաներս պարտական ենք նորան մեծ և ամենամեծ համարել։

Մտածենք, որ մեր զոյալն անվախճան է լինելու, եթէ պատճառը և ժամանակը մեր շփոթն չգործ դնենք, որ նորանով արժանանանք երկնքի արքայութեանը, երբ գիտենք, որ մի փոքր աշխատանքով կարող ենք նորան ժողովել՝ թող կարճ և փոքր հեշտութեանց համար՝ չկորցնենք։

Ո՞վ, որքան անտանելի ցաւ եղաւ Սաւաի՝ իրար, որ իւր կրտսեր կըրայր Յակովբն առել էր իրանից անդրանկութեան օրհնութիւնը, մի սկուտղ ռաբիս թանով, գոչում էր նա և բարկութիւնիցը մաշվում։

Նայենք մեզ՝ այս օրինակի մէջ, որ մի անարգ ու կարճատև հեշտութեան համար վաճառեցինք երկնքի արքա-

յութիւնը։ Ի՞նչ պէտք է անենք՝ երբոր մատնուինք այն անշէջ կրակին, եթէ ոչ լանք ու յաւիտեան լանք այն՝ որ կարճ ժամանակի մէջ կորցրինք։ Նովտի փեսաները՝ նորանից յորդորվում էին՝ որ նոքա իրա հետ քաղաքիցը դուրս գան, կարող էին շատ հեշտ կրակիցն ազատուիլ, բայց չկամեցան, իսկ երբոր տեսան կրակի և ծծումբի թափուին՝ որ ամբողջ քաղաքը մոխիր էր դարձնում, այն ժամանակ արդարև մեծ ցաւ և մեծ կսկիծ կրեցին՝ միայն նո՛ւ ա համար՝ որ առիթ ու բարի դէպքը անարգեցին։ Այսպէս էլ Ամմոնի որդւոց Անոն թագաւորը, որին յաջողեցաւ Դաւթի հետ խաղաղութիւն անելու հեշտ առիթ՝ բայց չկամեցաւ, իսկ երբոր տեսաւ քաղաքն աւերած, կրակով վառուած, և բնակիչներն ոչխարի նման սպանուած, ինչ կսկիծ՝ ասես՝ որ չկրեց, և ի՛նչ մեծ բան ասես՝ որ չտար միայն առիթը ձեռք բերէր Դաւթի՝ մի այնպիսի մեծ թագաւորի բարեկամութիւնը վայելէր, և խաղաղութեամբ վարէր իւր թագաւորութիւնը։ Բայց այս դաժնութիւնն ի՛նչ է, մեղաւորի անտանելի ցաւերի առաջ, երբոր կտեսնէ իրան մատնուած անշէջ կրակին, միշտ թշնամի երկնքի թագաւորին, և իրան հեռացրած սրբերի հետ թագաւորելուց, ո՛հ, ի՛նչ տրտմութիւն, ի՛նչ սրտմեղութիւն և ի՛նչ մոլեգնութիւն տեսն՝ որ չի պատել և պաշարել նորան։

Այժմ որչափ դառն են ողբ ու լացը ձախակողմեան աւազակին՝ որ աշխարհի Փրկչի հետ խաչ էր ելեր, առիթից՝ նորա բարին ընկերը գտուեց և գտաւ փրկութիւն, իսկ ինքը կորցրեց առիթը, կորցրեց և իւր փրկութիւնը։

Ի՞նչ զոյալութիւն և ի՛նչ ցաւ չի պաշարել այն մեծատուն մարդուն՝ որ փրկութեան առիթն իւր գոռն էր եկել, որով կարող էր ձեռք բերել երկնքի թագաւորութիւնը, եթէ առատաձեռն դոնուէր Նազարոսին, քաղցրութեամբ կերակրէր նորան, և հոգար նորա թեթև պէտքերը, բայց նա շների վերայ աւելի հոգս տարաւ, քան այն աղքատին, և այսպէս կորցրեց առիթը, կորցրեց և յաւիտենական բարին։

Արդ՝ թէև ճշմարիտ է, թէ մեր սպրած բոլոր ժամանակներում ունինք առիթ ստանալու երկնքի փառքը, սակայն մեր կեանքի ընթացքում պատահում են այնպիսի դէպքեր՝ որոնցից աւելի է կապուած մեր փրկութիւնը, և այս պատճառաւ, մեր Տէրը մեզ կգտնէ աւելի անպարտ և կամ պարտաւոր, ինչպէս մի ժամանակ Յովսէփին գտաւ պարտական, երբոր նա իւր Արարչի գէժ չմեղանչելու համար՝

իւր վերաբերուին թողեց Տիկնոջ ձեռքը և նորանից փախաւ։
Եւ որովհետեւ այս քաջագործութիւնը շատ մեծ էր, Աստու-
ծուն էլ խիստ շատ հաճելի եղաւ, որով նա արժանի եղաւ
Աստուծոյ մեծամեծ շնորհացը և բարձրացաւ մեծամեծ պա-
տուի և իշխանութեան։ Նոյնպէս Շուշանը մի մեծ առիթից
խիստ շատ օգտուելով՝ արժանի եղաւ նորանով գտնել հրա-
շալի փրկութիւն, երբոր ընտրեց աւելի մեռնիլ՝ քան հա-
ւանել լկտի և անպատկառ ծերոց պիղծ ցանկութեանը։ Աւ-
րեմի մենք էլ պարտական ենք զէպքերից օգտուիլ՝ որ մե-
ծամեծ առաքինութեանց քաջագործութեամբ արժանի լի-
նինք Արարչից ընդունել յաւիտենական փառքի պատիւը։ Եւ
սորա համար իմաստուններն ասացին. «Թէ առիթի գործ
գնել գիտենալը մեծ առաքինութիւն ձեռք բերելու համար՝
նախասահմանութեան մի մեծ նշան է»։

Տես թէ Հոաքէլն առիթը ձեռքից չկորցնելու համար՝
խնչպէս շուտով շտապեց հօրիցը գողացած կուռքը թաքց-
նել։ Տես թէ Աբիգեան նոյնպէս առիթը չկորցնելու համար
խնչպէս շտապով Դաւթի առաջն ելաւ՝ նորա բարկութիւնը
իջեցնելու, իսկ իթէ մի փոքր ուշանար՝ առանց կասկածի՝
ինքը, իւր մարդը և իւր բոլոր ունեցածը սրով կտոր կտոր
էին լիճիլու։ Տես թէ Աբրահամն խնչպէս շուտով շտապեց
պնդել Դովտին գերի վարող երեք թագաւորների յետեից.
եթէ մի փոքր ուշանար՝ Դովտն իւրայնովքն հանդերձ ձեռ-
քից գնալու էր։ Տես, թէ Սաուլը խնչպէս շուտով զօրքը
ժողովեց և Գաղաթաղու Յաբիսում բնակւողներին օգնու-
թեան հաղաւ և ազատուեց։ Արդ՝ իթէ մեզ մի փոքր աշխա-
տութիւն հարկաւոր է առիթից օգտուելով ստանալու երկնքի
թագաւորութիւնը՝ ուրիմն ինչո՞ւ ենք անհոգ թմրած մնում
ինչո՞ւ ենք գեղեցիկ առիթները մեր ձեռքերից կորցնում,
ինչո՞ւ ենք մեզ կապած ժամանակաւոր հարստութեան ծանր
շղթաներով, ինչո՞ւ ենք մեզ կա՞մաւ ստրկացրել աշխարհիս
վաղանցուկ մեծութեանցը, շտապենք դարձնել մեր թմրու-
թիւնից, կտրել այն շղթան՝ որ մեզ կապել է երկրի հետ։
Լսենք իմաստունի խօսքին՝ որ ասում է. «Ո՛րդի, իթէ քո
բարեկամին երաշխաւոր եղար, շտապիք քեզ ազատել, որով-
հետեւ ընկել ես քո ընկերի ձեռքը»։ Շտապենք մեզ մեղքերի
մէջ շաղաղող ընկերի ձեռքից ազատել, ապա թէ ոչ՝ կմառ-
նուենք յաւիտենական կորստին։

Այն մարդիկն՝ որոնք մեղքերով ընկել են գիւ իշխա-
նութեան ձեռքը, նորանք թող լաւ յիշեն և իմանան, որ նո-

րանց հարկաւոր է մեծ ջանքով աշխատել ժամանակը ձեռք-
ներիցը չկորցնեն, լոկ կորցնելուց յետոյ՝ բիւրաւոր զնու-
նեքը նոցա համար անօգուտ են։ Եւ նորանք ժամանակի մեծ
արժէքն իմանալով՝ ոչ մի բոլորէ ձեռքից բաց չթողին՝ և միշտ
բարեգործութեամբ օգտուեցան, ոչ ոքան քաղցր է նոցա
համար հատուցման օրը շուտով տեսնելու, և իւրեանց արթ-
նութեան ջանքովը ձեռք բերած փառքի երջանկութիւնը յա-
ւիտեան վայելելու։


Առաքեալն ասում է. «Եղբայրներ, այս եմ ասում, որ
ժամանակ կարճ է։ 1. Կորն. 7. 29»։ Շատ յարմար է յիշել
այստեղ այն առակը՝ որ հեթանոսներն պատմում են։ Թէ
ժամանակով Դիոսը մարդու ձեռքը տուաւ մի անօթ (աման)
ամեն բարութեամբ լի, իսկ նա՝ այն մեծ պարզեւի սաստիկ
ուրախութեամբ՝ որ գտաւ իւր ցանկացածը, որի մէջ պարու-
նակում էր բոլոր բարիքը. կամեցաւ շուտով նորանց վայել-
լի, և որովհետեւ նորա միջի բարիքների ամեն մէկիցը պէտքէ
զանազան ժամանակներում վայելէ և ոչ խառն ի միասին.
ուստի սնխոհմաբար անօթի բերանը բանալուն պէս՝ իս-
կոյն բոլորն էլ օդի մէջ ցիր ու ցան եղան և ոչնչացան, թէև
շտապեց անօթի բերանը փակել. բայց անօգուտ, որովհետեւ
բոլորն էլ դուրս էին թռել՝ միայն յոյսն էր մնացել։

Այս առակի յետին պարագայիցը տառեր է մեր փր-
կութեան առիթը. որովհետեւ ժամանակը թէև ամեն բարու-
թեանը լի է, բայց իթէ մեր ձեռքիցը թռչի՝ այն բոլոր բա-
րութիւնները կորցնելուց յետոյ մինչև անգամ յոյսն էլ չէ
մնալու մեզ, այլ նորան յաջորդելու է անվերջ զղջումը և
յաւիտենական տանջանքը։

Յովաթ թագաւորն՝ երբսր նետով գիտնին երեք անգամ
խփեց ու կանգնեց, Եղիսէն նորան ասաց. «Եթէ վեց կամ
հօթն անգամ գետնին խփած էիր եղիլ, բոլոր Ասորիներին
կտիրէիր»։ Մեծ դաճնութեամբ և մեծ տխրութեամբ նորա
սիրտը լցուեց, թէ ինչո՞ւ վեց կամ հօթն անգամ չխփեցի։

Արդ՝ իթէ առիթը նորան այնչափ տխրեցրեց ու ցա-
ւեցրեց՝ այնքան յաղթութիւններ և տէրութիւններ կորցնե-
լու համար, առանց յանցանքի՝ միայն երեք անգամ խփելուց
յետոյ կանգ առնելու պատճառաւ, հապա թշուառ դատապար-
տուածների սրտերը խնչպէս սուր սրերով չեն խոցոտուել՝
երբ իւրեանց յանցանքի համար՝ երկնային բարութեանց
առիթն անօգուտ կորաւ, նոցա հետ անդորձ կորաւ այլ յոյսը։


(ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ)



Յ Ը Ն Կ

1. Պատկեր յայտնի Միքայել Արամեանցի.	
II. Յառաջարան.	էջ
1. Ժամանակաւորի և յաւիտենականի զանազանութիւնը	11
2. Թէ սրբան հա կաւ որ է յաւիտենականութեան մտա- ծողութիւնը՝ վարքը գիտի լաւը փոխելու համար.	15
3. Յաւիտենականութեան յիշատակը՝ մահից աւելի զօրիդ է	18
4. Յաւիտենականութիւնը մոռացողների ողորմելի կեանքը	24
5. Ի՞նչ է յաւիտենականութիւնը	31
6. Դարձեալ ի՞նչ է յաւիտենականութիւնը	34
7. Դարձեալ ի՞նչ է յաւիտենականութիւնը	37
8. Ի՞նչ է յաւիտենականութեան վախճան չունենալը	42
9. Յաւիտենականութիւնը անփոփոխ է	49
10. Յաւիտենականութիւնը անհամեմատելի է	55
11. Ժամանակ և կեանք	58
12. Ժամանակի կարճութեան համար՝ կեանքի պէտքա- կանները յարգի չեն	61
13. Ժամանակը ի՞նչպէս է լինում յաւիտենական կեան- քի պատճառ	67

(Վերջ ա. հատորի)



1-50

Don

427
40
17 080

« Ազգային գրադարան



NL0156970

